№ 62 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 22 — 1907 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 22 № 62

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Համ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարտի 19-ին վախճանվեց

ՔԱԼԻՍԱ ԱԼԷՔՍԷԵՒՆԱ ԱԴԱՄՕՎԱՆ,

որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի որդիք՝ Նակով Խրիստափորովիչ և Արշակ Խրիստափորովիչ Ադամօֆները: Հոգեհանգիստը տեղի կունենայ մարտի 21-ին, երեկոյեան ժամի 7-ին: Յուղարկաւորութիւնը մարտի 22-ին, առաւօտեան ժամի 10-ին իր բնակարանից (Գօլօվինսկի պրօսպ. տուն Ալէլովի № 30) դէպի Մօղնու եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:
(Հ. Հ.) 2—2

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշւի և սիֆիլիս:
Ի. Ն. ՆՂՐԱՋԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջին:
Մ. Գ. ՆԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.:
Գ. Ա. ԲԵՅԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն:

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին օթեքներից:
աւ. ե. հ. կ. 26—100

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների:
Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.:
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33:
(ա. օ.) աւ. 24—100

Հայոց Հայրիկը Օշականում

Մեծադիր հիասքանչ գրաւիւր, պատրաստված Ֆրանկֆուրտում, գինը 1 ր. 50 կ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ 87-րդ մօտակայ տարեդարձի առիթով (ապրիլի 4-ին). վաճառվում է այսօրվանից ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ գրասենեակում, հատը 60 կ. մինչև ապրիլի 5-ը:

Հայ պարբերական բոլոր թերթերի բաժանորդների համար (եթէ ուղարկեն իրանց տպագրված հասցէները) ճանապարհածախսով և յատուկ պատրաստված այդ պատկերի համար խողովակներում—80 կ., նրանց համար, որոնք հայերէն ոչ մի թերթ չեն ստանում՝ 1 ր. 10 կ.: Ապրիլի 5-ից անխտիր ամենքի համար դարձեալ իր իսկական գնով՝ հատը 1 ր. 50 կ. վերադիր վճարով չէ ուղարկվում: Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ-Таразъ».
աւ. (Հ. շ.) 1—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղ. վարչ. յայտնում է, որ սայլապանութեան մասին § 13 պարտադիր որոշումների հիման վրա, Թիֆլիսում, նշանակված են ընտրութիւններ՝ կառքերի կառապանների ապագի և նրա թեկնածուի. մարտի 24-ին 1907 թ. շաբաթ, ցերեկվայ ժամի 1-ին և սայլերի կառապանների՝ սոյն մարտի 27-ին, հինգշաբթի, ցերեկվայ ժամը 1-ին քաղաքային խորհրդի դահլիճում, խնդրում է բոլոր կառքերի և սայլերի տէրերին շնորհ բերել, նշանակված ժամանակին խորհրդի դահլիճում իրանց նշաններով սայլապանութեան վերաբերեալ պարտադիր որոշումների գրքոյկներով, ժէշեալ ընտրութիւնները կատարելու համար:
աւ. 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, մարտի 23-ին

ՅՕԳՈՒՏ

Թիֆլիսի երկրորդ եւ Հաւլաբարի եժանագին գրադարանների

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ—ՍՕԼԻՍՏ

ՅՈՎՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՆՑԵՐՏ

Դաշնակահար Վ. Վ. ՊՈԿՐՕՎՍԿՈՒ մասնակցութեամբ.

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

Տեղերի գները 2 րուբլուց մինչև 20 կոպէկ:

Տոմսակները ծախվում են «ՓԱՐՈՍ» գրախանութում, Երևանեան հրապարակ, իսկ կոնցերտի օրը թատրօնում առ. ժամը 8-ից:
(աւ.) (Հ. ու.) 1—1

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէևսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966:

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախօրք յայտարարութեան համաձայն:

Երթեևկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետևեա բժիշկների ձեռքով.
Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ:
Ա. Գ. Բարսուկօվ.—չորեքշաբթի:
Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի:
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ:

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.:

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն:

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն:
(Հ. շ. և.) 19—50

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական օրինակներ. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Պետական Դումա. Մամուլ. Տեղեկութիւններ գաւառից. Բանւորական շարժում. Պետական Դումայի շուրջը. Պօբեդօնօսցեվի գործունէութիւնը ազատագրութեան շրջանում. Ալագինը Ամերիկայում. Տեղեկատու Զանգեզուրի. Մեր հասարակական գործերից մի նմուշ. Գործադուլը Կրասնօվօդսկում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՐԹԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

I

Մեր ժողովրդին կուլտուրական գիտելիքներ տալու միջոցներից մէկը փորձնական ագարակներ հիմնելն է:

Ի՞նչ է փորձնական ագարակը:

Դա մի փոքրիկ տնտեսութիւն է, որտեղ հողի մի կտորի վրա զանազան փորձեր են կատարվում, որպէսզի նրանց ցոյց տուած հետևանքներից կարողանայ օգտվել շրջակայ հողագործ ժողովուրդը:

Եթէ, օրինակ, մենք ուզում ենք փորձել մի նոր տեսակի ցորեն, գարի, կտաւատ, գետնախնձոր կամ մի ուրիշ արմտիք, մենք բուսցնում ենք նրանց այն հողի վրա, որ նշանակված է փորձնական ագարակի համար: Եթէ փորձը ցոյց տուեց, որ այս կամ այն տեսակ սերմը տալիս է լաւ արդիւնք, այն ժամանակ գիւղացիները օգտվում են այդ փորձից և իրանք՝ առանց տատանման՝ ձեռք են բերում աչքոված սերմը:

Նոյնն էլ վերաբերում է զանազան նոր տեսակ մրգերի աճեցման, գործիքների գործադրութեան և գիւղական արդիւնագործութեան զանազան ճիւղերի ներմուծման փորձերին:

II

Փորձնական ագարակները կարող են օգտաբեր լինել այն ժամանակ, երբ նրանց գլխին կանգնած են լաւ պատրաստված ղեկավարներ:

Եւ պէտք է խոստովանել, որ մեր երկրի մի քանի տեղերում փորձնական ագարակները չեն հասել իրանց նպատակին հէնց այն պատճառով, որ չեն ունեցել հմուտ ղեկավարներ: Իսկ այնտեղ, ուր այդ ղեկավարները եղել են պատրաստված անձեր և բարեխիղճ գործողներ, մենք տեսնում ենք, որ ժողովուրդը սկսել է օգտվել ագարակի արդիւնքներից իր տնտեսութիւնը բարւոքելու համար:

Գիւղացին պէտք է վստահ լինի ագարակի գործողների վրա, պէտք է հաւատայ, որ նրանց տուած ցուցումները և խրատները լաւ մտածված և հիմնաւորված առաջարկութիւններ են: Իսկ եթէ ղեկավարութիւնը կատարվել է վայրիվերոյ և ցուցումները եղել են լաւ չը կշռադատված, այն ժամանակ ագարակի գործողների հեղինակութիւնը ընկնում է, գիւղացիները կորցնում են իրանց վստահութիւնը և յետոյ կասկածով են վերաբերվում նոյնիսկ խելացի խրատներին:

III

Փորձնական կամ օրինակելի ագարակներ կարելի է հիմնել և հիմնվում են նաև դպրոցներին կից: Այդպիսի ագարակներից սկսում են օգտվել դպրոցի աւագ աշակերտները, նուիրելով գործնական աշխատանքներին որոշ ժամեր օրվայ մէջ:

Դպրոցական ագարակներ հիմնելը և կառավարելը պէտք է կատարվի մեծ լրջութեամբ և հմտութեամբ, որպէսզի նա կարողանայ ծառայել իր կրթական նպատակին: Այդ ագարակի ղեկավարութիւնը չէ կարելի յանձնել ամեն մի ուսուցչի, նա պէտք է տրվի այդ գործի համար պատրաստված անձի:

Եւ որովհետև դժուար է այդպիսի ուսուցիչներ գտնել ներկայումս մեծ թւով, ուստի դպրոցական ագարակներ չեն կարող բացվել մեծ քանակով գոնէ սկզբներում:

Աւելի լաւ է այս դէպքում ունենալ քիչ ագարակներ, բայց լաւ դրութեան մէջ, քան ունենալ աւելի շատ թւով, բայց անաջող գործավարութեամբ:

IV

Եթէ սկզբներում հնարաւոր լինէր փորձնական ագարակներ ունենալ գաւառի մի քանի կենտրօնական կէտերում և նրանց գլխին կանգնած լինէին լաւ պատրաստված ղեկավարներ, այն ժամանակ կարելի կը լինէր նոյն այդ ղեկավարների հսկողութեան և տեսչութեան տակ բանալ նոր ագարակներ և կազմել փորձնական կրթարանների մի ամբողջ ցանց:

Անհրաժեշտ է, որ մեր դպրոցական վարչութիւնը հոգ տանէր սկիզբ դնելու մի այդպիսի գործի յարմարագոյն կէտերում, որոնք ծառայէին, իբրև օրինակներ, ապագայի նոյնատեսակ ձեռնարկութիւնների համար:

Գիւղական մարդիկ ցանկանում են տեսնել կատարելագործութիւններ իրանց աչքերի առաջ և մենք պէտք է միջոցներ ձեռք առնենք նպաստելու այդ կուլտուրական գործի աջողութեան:

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ախալցխա, 19 մարտի

Ամսիս 18-ին, կիրակի ժամի $5\frac{1}{2}$-ին, քաղաքում տեղի ունեցաւ մի նշանակելի սպանութիւն: Պաշտօնից արձակված պրիստաւ Պաշօվը ատրճանակի մի քանի հարուածով ոստիկանատան մէջ սպանեց պրիստաւ Վարդան Պետրոսեանին: Սպանութեան շարժառիթը համարում են անձնական վրէժխնդրութիւնը. սպանվածը նոր էր պրիստաւութեան պաշտօն ստացել և յաջորդել էր սպանողին: Սպանողը չը փախաւ, յանձնվեց իշխանութեան: Իբրև թէ Պետրոսեանը դանօսներ տալով յաջողել էր իր նախորդին հեռացնել և նրա պաշտօնը գրաւել: Դէպքը առանձին տպաւորութիւն չը գործեց քաղաքացիների վրա: Եթէ սպանութիւնը կատարված լինէր ուրիշ կերպ, այն ժամանակ, ով գիտէ, քաղաքը գուցէ սաստիկ հազար տուգանքի ենթարկվէր:

Այս դէպքի աւելի տխուր հետևանքները են երկու բազմանդամ ընտանիքների թշուառ վիճակը: Երկուսն էլ թողնում են որբեր: Սպանվածին թաղեցին զինուորական երաժշտութեամբ:

Գալուստ

Գանձակից հեռագրում են մեզ.

Բաղայի գիւղացիները խնդրում են հացահատիկ ցանքսի համար կամ փող: Պէտք է փութացնել օգնութիւնը, որպէսզի չանցնէ ցանելու ժամանակը:

Կորիւն վարդապետ

Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովը արդէն որոշում է կայացրել սերմացու տալու բաղայցիներին և այս օրերս Յանձնաժողովի կողմից կը գնայ այնտեղ յատուկ գործակալ, որը ներկայումս Ղազախի գաւառումն է նոյն յանձնարարութեամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Վիբօրգի կոչը ստորագրելու գործի քննութիւնը վերջացաւ: Երեք ամիս հազիւ կը լինի սպասել, մինչև որ մեղադրվողները լրացուցիչ տեղեկութիւնները կը մտցնեն նախնական քննութեան մէջ:

Տեղական դատարանի խնդրով զբաղվելու համար Դումայի ընտրած մասնաժողովի մէջ արդարադատութեան մինիստրը՝ արդարադատութեան մինիստրութեան կողմից իբրև ներկայացուցիչներ նշանակել է իր օգնական Գասմանին և առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Մակէևսկուն:

Բազմից չափաւորականների և աջակողմեանների միացեալ խմբակների քաղաքական կլուբը, որի մէջ մտան և Պետական Խորհրդի կենտրոնի և աջակողմեան անդամներից շատերը, Դումայի չափաւորական, աջակողմեան, անկուսակցական անդամները և շատ հասարակական գործիչներ: Կլուբի նպատակն է՝ ներկայացուցչական հաստատութիւնների օրէնսդրական աշխատանքների նախնական քննութիւնը: Սահմանադիր-ռամկավարները և նրանց ձախ կողմնակիցները կլուբի անդամներ չեն ընդունվելու:

Ընդդիմադիր փրակցիաների տեղեկատու բիւրօն ագրարային հարցի անպատուղ վիճաբանութիւններին վերջ դնելու նպատակով, որոշեց գրված 115 հռետորներից՝ բոլոր ընդդիմադիր կուսակցութիւնների կողմից թոյլ տալ խօսելու միայն 19 ին:

Սիբիրի պատգամաւորները Տօբոլի պատգամաւոր Լապտևի նախաձեռնութեամբ որոշել են Դումայում կազմել Սիբիրի առանձին տէրրիտօրեալ փրակցիա:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: Նիստը բացվում է առաւօտեան ժամը 11 և 14 րոպէին: Նախագահում է Գօլօվինը, ներկայ են Պ. Ա. Ստոլիպինը, ֆինանսների, արդարադատութեան և առևտրի մինիստրները: Հերթին դրված է Պետական ելևմտի հարցը: Խօսքը պատկանում է ֆինանսների մինիստրին:

Կօկօվցեվ. «Ինձ վիճակվեց... (ձայներ՝ բարձր, բարձր»): — «Ես կը խօսեմ իմ ձայնի համեմատ:

Դահլիճում տիրում է խորին լռութիւն: Մինիստրը շարունակում. «Կրկնում եմ, ինձ վիճակվեց մի պատասխանատու խնդիր—առաջինը ներկայացնել եկամուտների պետական ելևմտի նախագիծը: Միապետի կամքով կեանքի կոչված նոր օրէնսդրական հաստատութիւնների քննութեան: Այդ բարդ առարկան աւելի մօտից հետազօտելու համար, դուք արդէն ընտրեցիք առանձին բիւջէտային յանձնաժողով, որը պէտք է քննէ կառավարութեան ենթադրութիւնների բոլոր մանրամասնութիւնները և ներկայացնէ ձեզ իր եզրակացութիւնը ըստ էութեան: Մինչև որ յանձնաժողովը կը կատարէ այդ նախապատրաստական աշխատանքը, ի հարկէ, աւելորդ կը լինի խլել ձեր ժամանակը, ներկայացնելով առաջին անգամ ձեր գնահատութեան հանված բիւջէտի մանրամասն տեսութիւնը, բացատրել, արդարացնել նրա առանձին թւաքանակութիւնը կամ մինչև անգամ փորձել պաշտպանելու նրան այս կամ այն ենթադրական քննադատութիւնից: Դեռ դրա համար ժամանակ կայ: Բայց միևնոյն ժամանակ, հազիւ թէ համապատասխանէր առարկայի լրջութեանը, եթէ ես բաւականանայի նրանով, որ ձեզ դիմէի և առաջարկէի յանձնել բիւջէտը բիւջէտային յանձնաժողովի քննութեան և համբերութեամբ սպասէի այն հնարաւոր, գուցէ ոչ շատ մերձաւոր րոպէին, երբ հաշուեկշռի նախագիծը կը դրվի ձեր առաջ՝ լուսաբանված ձեր ընտրած լիազօրների քննութեամբ և գնահատութեամբ: Ես կը կամենայի յուսալ, որ դուք ինձ չէք դատապարտի նրա համար, որ մի քանի րոպէով ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ և կաշխատեմ ընդհանուր գծերով բացատրել ձեզ այն խնդրի նշանակութիւնը, որ վիճակված է ձեզ, նրա ծաւալը, նրա առանձնայատկութիւնները: Ի զուր չէ, որ բիւջէտը միշտ և ամեն տեղ ամբողջ հասարակութեան ուշադրութեանն է գրաւում դէպի ինքը և ոչ միայն իր երկրի հետաքրքրութիւնն է զարթեցնում, այլ և ուրիշ երկիրների, որոնք կապված են քաղաքական, տնտեսական և ֆինանսական միութեամբ—և մի որոշ ժամանակամիջոցում իշխում է պետական կեանքի բոլոր կողմերի վրա, թէ միայն ինքը՝ հասարակութիւնը կարողացել է կանգնել կուլտուրականութեան այն բարձրութեան վրա, որը մատչելի է դարձնում նրա համար գիտակցութիւնը այն բանի՝ թէ պետական մեխանիզմի գործունէութեան որպիսի զանազանակերպ կողմեր են շօշափվում, ուղղութիւն ստանում և լուծվում հէնց բիւջէտի միջոցով և միմիայն նրանով: Բիւջէտի նշանակութեամբ է բացատրվում պետութեան ընդհանուր տնտեսութեան մէջ և այն աշխատանքի քանակութիւնը, որը բիւջէտ կազմողներին է վիճակվում, նոյնպէս և այն հիմնարկութիւններին, որոնց դատաստանին է նա ենթարկվում: Սակայն աշխատանքի այդ քանակութիւնը և խնդրի հէնց բարդութիւնը հազիւ թէ հաւասարվեն ուրիշ որևէ օրինագծերի նշանակութեանը և ծաւալին և կատարեալ անօրինակ չափեր են ընդունում, երբ քննութեան գործը ընթանում է այն առանձին պայմաններում, որի մէջ պէտք է Դուման սկսէ աշխատել: Բացառութեամբ, երևի, իր ոչ շատ անդամների, Դուման չունի և չէ կարող ունենալ պատշաճաւոր փորձառութիւն բիւջէտային տեխնիկայի մէջ, այն փորձառութիւնը, որը մինչև անգամ ձեռք չէ բերվում միմիայն գիտական ծանօթութեամբ ֆինանսական և տնտեսական հարցերի հետ, այլ պահանջվում են մասնագիտական հմտութիւններ, որոնք ձեռք են բերվում փորձով մի այդքան բարդ գործի մէջ: Գործի համար այդ անճեռնտու յատկութիւնը, ի հարկէ, ժամանակաւոր բնաւորութիւն ունի. բարի ցանկութեամբ, փոխադարձ վստահութեամբ կարելի է ամեն դժուարութիւններին յաղթել, և ինչ որ այժմ բարդ և վիճելի է համարվում, վաղը կը ներկայանայ ձեր առաջ անկողմնապահութեան և անալիզի լոյսով լուսաբանված: Հարկաւոր է միայն, որ բիւջէտի քննութիւնը դառնայ գործնական լինի, որ ամեն բանի հիմքի մէջ դրվի մանրամասն և անկողմնապահ հաւասարակշռութիւն և ստուգումն կառավարչական նախահաշիւների: Այդպիսի ստուգումն թոյլ է տալիս, մինչև անգամ անխուսափելի է դարձնում. տարակուսութիւններ, յաճախ, չէրմ և յամառ և չը պէտք է խուսափել նրանցից, որովհետև նրանց մէջն է ձեր աշխատանքի պտղաբերութեան գրաւականը: Սակայն ձեր ներկայ աշխատանքի մէջ կայ և մի այլ կողմ, որը քիչ չէ բարդացնում բիւջէտի քննութեան դրութիւնը, առհասարակ: Այժմ մանաւանդ դա մի անյետաձգելի գործ է: Այդ գործը չէ կարելի ընդհանուր հերթի մէջ դնել և կատարել, երբ հերթը գայ և ազատ ժամանակ լինի: Դա պէտք է բոլոր հերթերից դուրս լինի:

Այդ բանը պահանջում են ամբողջ պետութեան էական շահերը ու ամբողջ ժողովրդի կարիքները, այլ ոչ թէ նրա համար, որ, առանց՝ մի ամիս առաջ իմ մտցրած՝ պետական հաշիւը հաստատելու, դժուար է իր ժամանակին պետութեան այս կամ այն ծախսերը անել այդպիսի դժուարութիւն հիմա, ինչպէս որ չը կայ, որովհետև կառավարութեան տրամադրութեան տակ դրա համար անհրաժեշտ օրինական միջոցներ կան: Այդ անհրաժեշտ է պետական կարգի ամենաբարձր գիտումների համաձայն, անհրաժեշտ է նրա համար, որ այնպիսի մեծ պետութիւն, ինչպիսին մեր հայրենիքն է, միշտ մնում էր և կը մնայ մեծ հակառակ նրա կրած բոլոր դժբաղդութիւնների և հակառակ այն բոլոր ծանր հարուածների, որ նրան հասցնվում են ներքին խռովութիւններով նա չէ կարող պետական ֆինանսների կողմից կանոնաւոր կեանքով ապրել, առանց բիւջէտի հաստատման, որը ոչ թէ մի աւելորդ շքեղութիւն է, այլ մի անհրաժեշտ և արմատական կեանքի պայման ամեն մի երկրի համար: 1863 թւականից մեզանում բիւջէտի կանոնաւոր կարգ կար: 1879 թւականից անընդհատ, 28 տարվայ ընթացքում, ամեն մի տարեգլխում միշտ յայտարարւում էր պետական հաշուեկշիռը, ուստի մենք պարտաւոր ենք բոլորս մեզ համար մատչելի միջոցներով և մեր միատեղ կատարած աշխատանքով ձգտել, որ այդ կարգը նորից վերականգնվի: Այդ անհրաժեշտութիւնը աւելորդ ապացոյցներով արդարացնելը ես աւելորդ եմ համարում և հիմք չեմ գտնում ձեզնից ժամանակ խլելու այնպիսի մի բանի համար, ինչ միանգամայն պարզ է: Կաւելացնեմ միայն այն, որ Պետական Դումայի կողմից բիւջէի անյապաղ քննվելու օգտին է խօսում և այն հանգամանքը, որ 5 ամսից յետոյ, այսինքն՝ սեպտեմբերի 1-ին, պիտի սկսէ Դումա մտնել 1908 թւականի հաշուեկշիռը, 6 ամսից յետոյ, այն է՝ հոկտեմբերի 1-ին պէտք է քննութեան ենթարկվի գալ տարվայ բիւջէտը: Ի նկատի առնելով, թէ որչափ ժամանակ պէտք պիտի լինի բիւջէտային կոմիսիայի աշխատանքի, Դումայի ընդհանուր ժողովում նրան քննութեան ենթարկելու համար և Պետական Խորհրդի աշխատութիւնների համար, դրա վրա աւելացրէք և այն, թէ որ աստիճան կարևոր է, որ 1908 թ. հաշուեկշիռը համաձայնութեան մէջ դրվի 1907 թւականի հաշուեկշռի հետ, այն ժամանակ դուք, երևի, կը համաձայնէք ինձ հետ, թէ որ աստիճան կարևոր է բիւջէտի քննութեան անյետաձգելիութիւնը: Հիմա անցնում եմ խնդրի էութեանը ընդհանուր գիտումների այն սահմանների մէջ, որ ես յիշեցի քիչ առաջ: Ես, ի հարկէ, չեմ բերի ձեր առաջ շատ առանձին թւանշաններ և մանաւանդ չեմ պաշտպանի նրանց մանրամասնին հաշիւներով: Այդպիսով ես ձեր ուշադրութիւնը կը յոգնեցնէի և ձեզնից իւրաքանչիւրի մտքում դժգոհութիւն միայն կը յարուցանէի ինձ դէմ: Ինչու համար են այդ բոլորը, քանի որ հէնց այդ հաշիւների առարկան դեռ ես մի անծանօթ լաբիւրինթոս է և քանի որ մեր ձեռքում դեռ ես չը կայ այն ուղեցոյց թելը, որ բիւջէտային կօմիսիայի զեկուցումը պիտի կազմի: 1907 թ. բիւջէտը կազմելը շատ պատճառներով ամենադժուարին պայմանների մէջ էր գտնվում: Մօտ երկու տարի՝ և 1904 և 1905 թւականներում մենք պատերազմ էինք մղում, որը անհագին ծախսեր պահանջեց և մեր պետական կրեդիտը բոլորովին բացառիկ լարված դրութեան մէջ դրեց: Դեռ ես պատերազմական որոտը չէր անցել, երբ մեր հայրենիքի գլխին նոր հարուածներ տեղացին, ներքին խառնակութիւնների ոչ-պակաս սպառնական և ոչ-պակաս չարագուշակ հարուածները, որոնք ոչ-պակաս, եթէ ոչ էլ աւելի, վնաս են հասցնում հիմա, քան հասցրեց արտաքին թշնամու դէմ մղած կռիւը: Այդ երկու դժբաղդութիւններին միացաւ և երրորդը. անբերրիութիւնը, որը երկու տարի շարունակ տարածվում է մեր հայրենիքի ընդարձակ շրջանների վրա: Այս բոլոր դժբաղդութիւնների ազդեցութեամբ մեր բոլորիս աչքի առաջ ժողովրդի բարեկեցութիւնը խախտվեց. ծանր վնաս կրեց և մեր՝ դեռ ես չամրապնդված արդիւնագործութիւնը, վնասվեց և մեր վարկը, որը շատ քիչ ժամանակներ առաջ, իրան իրաւամբ արժանի բարձրութեան վրա էր գտնվում: Շատ ծանր հետևանք ունեցան այդ ցաւոտ, բայց դժբաղդաբար դեռ ես չանցած տարիները. նրանք իրանց կնիքը դրեցին մեր ներքին ամբողջ կեանքի վրա: Այդ պայմանները չէին կարող ամենավճռական ազդեցութիւն չունենալ ձեզ ներկայացվող բիւջէտի կազմելու վրա: Կառավարութիւնը հնար եղածին չափ չափաւորութիւն է մտցրել ծախսերի մէջ, նա աշխատել է ի նկատի առնել սառցվելիք եկամուտները, չը խտրելով ամեն մի ճիշտ որոշված բիւջէտի համար անհրաժեշտ այն սկզբունքից, որ հաշուի առնված եկամուտները անպատճառ պէտք է համապատասխան լինեն արդի ժամանակների տնտեսական պայմաններին: Ինձ համար իրաւունք չեմ համարում իմ զեկուցումը բազմաթիւ թւանշաններով բեռնաւորել, սակայն չէ կարելի արտայայտված դրութիւնները չը հաստատել մի քանի ընդհանուր թւանշանական ապացոյցներով: Ամենից առաջ ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում ծախսերի մէջ մտցրած ընդհանուր թւերի վրա: Նախահաշիւը բոլոր՝ սովորական և բացառիկ ծախսերի ամբողջ գումարը 2,471 միլիօն րուբլի է հաշւել, 39 միլիօնով աւելի պակաս, քան 1906 թ. ծախսերը, բայց այդ տեսակ համեմատութիւն գնել երկու հարևան տարիների մէջ սխալ կը լինէր: 1907 թւի բիւջէն նախատեսնում է ներկայ տարվայ բոլոր ծախքերը և, եթէ կարելի է նկատել մի բան իբ մի քանի մասերում, օրինակ մատակարարութեան գումարների մէջ, այդ այն է՝ որ նախահաշւի նախագծի մէջ առաջ բերած թւերը իսկական կարիքից կարող են պակաս լինել, որը և ասված է բացատրութեան թղթի մէջ, և այդ տարբերութիւնը, երևի, համեմատաբար աննշան կարող է լինել: Ուրիշ բան էր 1906 թւին. բիւջէի իսկական իրագործումը նախահաշւի մէջ նախատեսնվածից գերազանց: Ազգաբնակութեան մատակարարողական օգնութեան ծախքերը աւելացան և հասան մի խոշոր գումարի—80 միլիօնի, որը պահանջեց կրկնված անբերրիութիւնը, որ նախատեսնված չէր նախահաշիւը կազմելիս: 1905 թւի վերջերում պատերազմը լիկվիդացիայի ենթարկելու համար ծախքերը աւելացան և հարկ եղաւ ծածկել 1906 թւի եկամուտներով 1905 թւին չը վճարված պարտքը:

Այդ բոլոր փոփոխութիւնները անցեալ տարվայ իսկական նախահաշւի համաձայն վարվելով՝ ծածկեցին 2,846 միլիօնի կատարված ծախքերը, չը հաշւելով ամենևին այն կարճատև պարտքերը, վճարելու համար արված ծախքերը, որոնք բաց թողնվեցին 1905 թւին և 1906 թւի սկզբներում, որոնց շնորհիւ վճարվել են 3,298 միլիօն: Այդ թւերի հետ համեմատելով 1907 թւի բիւջէն՝ 1906 թւի բիւջէին շատ թեթև է. առաջին դէպքում, համարեա, տարբերութիւնը 375 միլիօն է, երկրորդ դէպքում՝ նոյնիսկ աւելի քան 800 միլիօն: Ես այդ թւերը բերում եմ բացառապէս նրա համար, որպէսզի ձեզ համար պարզ լինի հին ու նոր բիւջէի համեմատական տարբերութիւնը և այն

ընդհանուր եզրակացութիւնը, որ ես թոյլ կը տամ ինձ անելու յետոյ։ Երկու բիւջէների համեմատութիւնը աւելի ապացուցված ընթոյ կը լինի, եթէ մենք կանգ առնելու լինենք սովորական և արտակարգ բիւջէների առանձին համեմատութեան վրա։ Դա մանաւանդ աւելի տեղի ու անհրաժեշտ կը լինէր, որովհետև նրա և միւսի բնոյթն ու էութիւնը բոլորովին տարբեր են։ Սովորական բիւջէի մէջ վաղուց արդէն չենք տեսնում նախահաշւից դուրս կատարված ծախքեր, այսինքն այնպիսիները, որոնք նախահաշւի մէջ չեն նախատեսնված, մինչդեռ արտակարգ բիւջէները իրանց յատկութեամբ չեն համապատասխանում նախահաշւի ծախքերին և պահանջում են աւելի։ 1907 թ. ծախքերի սովորական բիւջէն կազմում է 2173 միլիոն րուբլի, որ 1906 թւի բիւջէից աւելի է 140 միլիոնով, բայց այդ երկու տարիները իրար հետ ուղիղ կերպով համեմատելու համար, ընդունելով կառավարութեան չափաւոր տեսակէտը, այդ գումարները հաշուելիս, հարկաւոր կը լինի դուրս ձգել առաջին—փոխառութեան վճարների վրա աւելացած 456 միլիոն, երկրորդ—երկաթուղիների շահագործութեան համար աւելացած ծախքերը, որոնք մեծ մասամբ ծածկվում են եկամուտների 285 միլիոն յաւելումի միջոցով, երկրորդ—նոյնպիսի յաւելումով գինու մենաշնորհից, որը տուել է եկամուտի յաւելում 412 միլիոն։ Այդ երեք աղբիւրները միասին, համարեա, կազմում են 106 միլիոն և մնացեալ բոլոր սեսչութիւններին ընկնում է ծախքերի աւելացումից ընդամենը 39 միլիոն, հաշուելով, ի հարկէ, և 2/3 միլիոն զեղչումը, որ գոյացել է ծովային նախահաշւի մէջ։ Դրանց արդարացուցիչ փաստաթղթերը դուք կը գտնէք ներկայացված նախահաշւի բացատրութեան բաժնի համապատասխան տեղերում։ Աւելի համոզեցուցիչ ապացոյց, որ 1907 թւի ծախքերի նախահաշիւը կազմված է չափաւոր կերպով, կարելի է տեսնել, եթէ թոյլ կը տաք ինձ համեմատելու 1907 թւականի թուանշանները այն վերջին տարվայ թուանշանների հետ, երբ Ռուսաստանը ունեցել է պետական տնտեսութեան նորմալ պայմաններ։

Այդ ասելով ես հասկանում եմ 1903 թւականը։ Այդ թւականը ես վեր եմ առնում բոլորովին գիտակցաբար. 1904 և 1905 թւականի պատերազմական տարիներում մեր բիւջէտը վերին աստիճանի ճնշված դրութեան մէջ է եղել, ամեն ինչ զոհաբերված է եղել պատերազմական ծախքերը հոգալու համար, և այն բոլորը, ինչ որ անյետաձգելի էր, յետաձգվել է. այդ պատճառով ես վերցնում եմ 1903 թւականը, իբրև մի տարի, որ փոքր ի շատէ սովորական զարգացում բիւջէն է ունեցել, և ապացոյցի համար համեմատում եմ 1903 և 1907 թւի թուանշանները, որից երեւում է ներկայ տարվայ բիւջէի գլխաւոր տարբերութիւնը անցեալի համեմատութեամբ, հակադրելով լայն ճիւղի թւերը, որոնց մասին խօսք եղաւ, այն է, երկաթուղիների կառավարութեան, գինու մենաշնորհի և պետական պարտքերի վճարների թուանշանները. այսինքն համեմատում ենք 1907 թւի միևնոյն մասի թուանշանները 1903 թւականի հետ։ Այդ դէպքում 1907 թւի սովորական ծախքերի ընդհանուր գումարի, որ 2173 միլիոն րուբլի է, պակասում է 191 միլիոն, որովհետև պարտքերի հատուցումից աւելացել է 88 միլիոն, գինու մենաշնորհի շրջանառութեան ծախքերը 57 միլիոն, երկաթուղիներից՝ 45 միլիոն, որի շնորհիւ կազմում է 1972 միլիոն, 1903 թւականի ծախքերի գումարից աւելի, ընդամենը 89 միլիոն, աւելացած այդ ծախքերի համարեա կէս մասը ընկնում է միայն զինւորական մինիստրութեան վրա։

Ժամանակի քառամեայ շրջանում աճումը հաստատում է այն միտքը, որ ես առաջ յայտնեցի, որ 1907 թւի ծախսերը որոշելու ժամանակ կառավարութիւնը աշխատեց մըտցնել իրան մատչելի ամբողջ զգուշաւորութիւնը և չափաւորութիւնը, թէև ստիպված էր կատարել մի քանի նոր ծախսեր, որոնք վաղուց սպասում էին իրանց լուծման, որպիսիներն են օրինակ, սկզբնական կրթութեան, հողային բարեկարգութեան ծախսերը և այլն։ Յարակցում եմ սրա հետ միասին—կշտամբանքից խուսափելու համար—որ այդօրինակ համեմատական չափաւորութիւնը մատչելի էր միայն ծովային վարչութեան ծախսերը էականապէս կրճատելու պայմանով, ծախսեր, որոնք 1907 թ. ելևմտով հասան միայն 81 միլ. րուբլի, մինչև դեռ 1903 թւի հաշւի համաձայն նրանք կազմում էին 114 միլիոն։ Այս հակիրճ զուգաւորութիւնը ինձ իրաւունք է տալիս ասել այն, ինչ որ ես ասացի վերևում։ Կառավարութիւնը՝ իր խորին համոզմունքով և մեր վրա դրված պատասխանատուութեան և պարտականութեան լիակատար գիտակցութեամբ արեց այն ամենը, ինչ որ կարելի էր, հնարաւոր էր, որպէսզի 1907 թ. ծախսերի նախահաշիւը ծայրահեղ չափաւորութեան աստիճանի հասցնէ։ Մեզ կասեն. գուցէ մենք դարձեալ ոչ լիովին կերպով գընահատեցինք մեր հայրենիքի անցած ծանր ու դժուարին պայմանները և նախահաշւում թողինք կրկին շատ աւելորդ, անպէտք բաներ։ Թող այդպէս լինի։ Դժուար չէ բնաւ քննադատել, առանձնապէս հեռուից, ընդհանուր ֆրազներով, յաճախ վերին աստիճանի գեղեցիկ և գրաւիչ դատողութիւններով։ Մենք կսպասենք, երբ նախահաշւի մասնաժողովը կը մտնէ նախահաշւի նիւթի ամենախորքը և կասէ մեզ—ոչ սոսկ բարի ցանկութիւնների հայեցակէտից, այլ առանձին կոնկրէտ կէտերով, թէ ինչում մենք չենք կատարել մեր պարտքը, մենք կընդունենք մեր սխալանքները, եթէ միայն դրանք ապացուցվեն։ Սակայն այժմ ես կասեմ, որ ծախքերը կրճատել—այնքան էլ դիւրին և հեշտ չէ։ Աւելի ես դիւրին է, քան կատարել ծանօթ, թերևս ձեզանից շատերին ձեր մասնաւոր կեանքում, ձեր ընտանեկան ծախքերի կրճատման ծանր գործողութիւնը, ծանր առաւելապէս այն ժամանակ, երբ ձեզ վրա է ընկած ուրիշներին օգնելու պարտականութիւնը, և առաւել ես ծանր այն ժամանակ, երբ ձեր կեանքը առանց այն էլ հիմնված է շատ մեծ համեստութեան և խնայողութեան վրա, երբ դուք առանց այն էլ շատ անհրաժեշտ բաներում ձեզ զրկում էք։ Հէնց այդպիսի դրութեան մէջ գտնվում է և Ռուսաստանը, իսկ մեր պետական գանձարանը չէ կարող կրճատել պետութեան կնքած փոխառութիւնների ծախքերը, որոնք անխուսափելիօրէն աճեցին նոյնիսկ պատերազմի ազդեցութեամբ։ Տնտեսական բնաւորութիւն կրող յօդուածները նոյնպէս չեն թոյլատրում կրճատումներ անել, որովհետև նրանց կրճատման հետ զուգընթացաբար պէտք է կրճատվեն և եկամուտները։ Պետութեան ծախքերից շատերը, նոյնիսկ արհեստական կերպով պահանջվածները, անխուսափելի ընդարձակում են պահանջում։ Մնացածում, ծախքերը կարելի է կրճատել միայն այն ժամանակ, երբ փոփոխութեան կենթարկվեն նրանց արդարացնող օրէնքները և երբ մեծ ծախքեր պահանջող լուրջ կարգերի և պայմանների փոխարէն կը մտցնվեն ուրիշները, որոնք կապված են ժողովրդական սեփականութեան սակաւ ծախքերի հետ, եթէ միայն այդպիսինները իսկապէս գտնվեն։ Այսպէս, մեծ քանակութեամբ վառելանիւթ կլանող մեքենան պէտք է փոխարինվի նոր, աւելի տընտեսող մեքենայով, եթէ այդպիսի փոփոխութեան համար միջոցներ լինեն, կամ յամենայն դէպս վերանորոգված է,—եթէ այդ աւելի շահաւէտ է, և միայն այն ժամանակ, երբ դա կատարված է, կարելի է պակասեցնել վառելանիւթը։ Սակայն շատ մեծ անխելքութիւն կը լինէր, բարկանալով մեքենայի վրա, չը տալ նրան վառելիք, և դրանով նրան կտրել մուրճի հարուածներով։ Կաւելացնեմ կրկին մեզ նման՝ մի ըէժիմից մի ուրիշին անցնելու ժամանակ, միւս երկրների ունեցած ֆինանսական պատմութիւնը։ Ամենուրեք միշտ բողոքներ են լսվել ծախքերի բարձրանալու դէմ և պահանջներ՝ մտցնել վերին աստիճանի խնայողութիւն յանուն ժողովրդի բարիքի, ամեն տեսակ տեսութիւններ նոր սկզբունքներով ֆինանսները կարգաւորելու ժամանակ, և իբրև անխուսափելի հետեւանք, խոստացվել են բաւարարեցնել բոլոր անյետաձգելի պահանջները, որով առաջարկվում էր վերցնել միայն չունեւորների վրա ընկած հարկերը և փոխարինել նրանց այնպիսիներով, որոնք հարուած հասցնէին միայն հարուստներին։ Այս ամենը վաղուց յայտնի է ամենքին և իւրաքանչիւրին։ Դժբախտաբար, ֆրանսիական այն առածը թէ «խոստանալ մէկ բան, կատարել մի ուրիշ բան» ոչ մի տեղ այլ ևս չի իրագործվում, քան ֆինանսների խնդրում և հրապուրիչ խոստմունքների քաղցր քունը փոխվում է սովորաբար վերին աստիճանի անհաճելի արթնութեան։ Խոստմունքները տրվում են, հնի քննադատութիւնը անխնայ տարածվում է, իսկ ծախքերը յաջորդաբար աճում են և պարտատէրը սպասում է, թէ երբ կը գայ խոստացված աստուածային ողորմութիւնը. իսկ մինչ այդ նա աւելի ես լայն է բաց անում իր քսակը պետական գանձարանի պահանջների համար։ Աստուած տայ, որ մեզ մօտ ուրիշ կերպ լինի, որպէսզի ռուս ժողովրդական ներկայացուցչութիւնը ցոյց տայ ամբողջ աշխարհին ուրիշ օրինակներ։ Անձամբ, ես այդ առիթով շատ մեծ կասկածներ ունեմ։

Անցնում եմ այժմ արտակարգ նախահաշւի համառօտ նկարագրութեան։ Այս տարին համեմատելով անցեալ տարվայ հետ, ես գալիս եմ նոյն եզրակացութեան, ինչպէս սովորական ելմտի նկարագրութիւնը։ Վերստին ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ 1906 թ. նախահաշիւը, իր իսկական գործադրութեամբ ենթադրվող ելևմտից մեծ չափով պակաս դուրս եկաւ, և ես յուսում եմ, եթէ ոչ համոզված, որ որևէ նոր ցաւալի բարդութիւններից դուրս—գալիք տարին կը հետևէ իր նախորդին։ Խընդրում եմ ձեզ նկատել, որ 1907 (!) թ. արտակարգ ծախսերի գումարը կազմում է 198 միլիոն, 179 միլիոնով 1906 թ. պակաս։ Ի հարկէ, ինձ կասեն, որ չի կարելի համեմատել պատերազմի աւարտման տարին հետեւեալ տարվայ հետ, բայց այդպիսի ցուցմունքը բոլորովին ուղիղ չի լինիլ։ Պատերազմի վախճանը և նրա հետեւանքները շարունակվում են, թէև փոքր ծաւալով և այս տարի, դժբախտաբար կը շարունակվեն և հետեւեալ տարիները. բայց դրա փոխարէն այս տարին երկու անգամ աւելի է ծախսելու մատակարարական օգնութեան համար, քան անցեալ տարի էր և իր կազմում ունի 52 միլիոնի փոխառութիւն՝ կարճ ժամանակեայ պարտամուրհակները վճարելու համար, որպիսին բնաւ չէր նախատեսնում 1906 թ. նախահաշիւը։ 1906 և 1907 թ. թ. ելևմուտը համեմատելու ժամանակ դուք կը տեսնէք այսպիսի տարբերութիւն. ամբողջ 1906 թիւը առանց հանգցնելու կարճ ժամանակեայ պարտամուրհակները, տուեց 802 միլիոն կամ 1907 թւից 504 միլիոնով աւելի. իսկ պարտամուրհակները հանգցնելով—1246 միլիոն կամ 948 միլիոնով աւելի։ Ես խնդրում եմ ձեզանից այդ թուանշանները պահել ձեր յիշողութեան մէջ այն ընդհանուր ելևմուտը գնահատելու ժամանակ, որը կանեմ շուտով։ Բայց նախքան այդ գումարին անցնելը, ես ինձ թոյլ կը տամ մի քանի խօսք ասել՝ ի բացատրութիւն ելևմտի նախագիծը պետական եկամուտով հաշվելուն։ Ձեր ուշադրութիւնը չեմ կենտրոնացնիլ այն կշտամբանքի վրա, որպիսին ինձ անվում է իբրև նախահաշիւը կազմողի, որ իբր չեմ պակասեցրել ծախքերը. նախահաշւի մասնաժողովը կը քննէ այդ հարցը միանգամայն անկողմնապահութեամբ և խոր կերպով, և մենք կը գտնենք երկու կողմերի համար էլ գոհացուցիչ փաստեր, որոնք մեզ կը հասցնեն կանոնաւոր լուծման։ Յիշեցնելով, սակայն, միշտ այն մասին, որ նախահաշւի սխալների բոլոր տեսակներից վատթարը նա է, որը սպասում է շատ մեծ ծախք և պետական տնտեսութիւնը ենթարկում է հաւանական ապաւէկների ըսակին, կարելի է տանել մէկ անգամ, կարելի է տանել և մի քանի անգամ, բայց մշտապէս և հաստատապէս յոյս ունենալ շարունակ տանելու վրա—նշանակում է իր համար խոշոր հիասթափութիւն պատրաստել։ Եկամուտը կազմելու և նրան ծախքերը համակերպելու ժամանակ մենք բացառիկ դժուարին կացութեան մէջն էինք։ Ամենուրեք, երբ կառավարութիւնը պէտք է բաւարարութիւն տայ ծախքերին, և երբ հանդիպում է նոր պահանջների, և երբ գոյութիւն ունեցող հարկերը հարկաւոր միջոցները չեն տալիս, նա առաջարկութիւն է անում՝ նոր հարկեր մտցնել ելևմտի նախագծում, իսկ օրէնսդրական հաստատութիւնները քննում ու լուծում են նրանց միաժամանակ և զուգահեռաբար—1907 թ. ծախքի նախահաշիւը քննելու հետ։ Ճիշտ է, արդարև, մենք հոգացինք մի շարք նախագծեր մացնել—պետական գանձարանի միջոցները ուժեղացնելու համար և մեր հարկերի սիստեմի մէջ մեծ հաւասարակշռութեան սկզբունք մացնել, բայց մենք մեզ բոլորովին պարզ հաշիւ տուինք, որ լաւագոյն դէպքում այդ նախագծերի քննութիւնը և հաստատութիւնը պետական գանձարանին հնարաւորութիւն կը տայ նոր աղբիւրներ որոնել՝ յետագայ ժամանակի համար։ Սկսած 1908 թւից և այս [illegible] վայ համար մենք պէտք է բաւականանանք գոյութիւն ունեցող աղբուրի միջոցներով և աշխատենք առանց մըզել սովորական ծախքերի միւսորումը գործադրվող հարկային սիստեմից սպասվող հասոյթների շրջանակի մէջ։

Մեզ այդ անջրպետից մեծ ջանքերից յետոյ և այդ հանգամանքում ես տեսնում եմ մեր ֆինանսական դրութեան ամրապնդման գրաւականը։ Սովորական նախահաշիւը կազմված է առանց դէֆիցիտի և մենք հանդիպեցինք միջոցների պակասութեան՝ արտակարգ ծախքերը ծածկելու համար միայն։

Որքան որ սպառնալի լռվէր «դէֆիցիտ» օտարազգի խօսքը, որը նորմալ սովորական և մշտական ծախքերի տեսակէտից նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ հիւանդութիւնը կենդանի օրգանիզմի մէջ, բայց կայ քայքայում և հիւանդութիւն, որը պահանջում է աւելի խոր և լիակատար բժշկութիւն, քան խոր կերպով արմատացել է հիւանդութիւնը։ Մենք բայց և այնպէս այդ երևոյթին պէտք է հանգիստ վերաբերվենք և մեզ պարզ հաշիւ տանք իրօք այն բանում, որ դէֆիցիտը կազմվել է միայն արտակարգ նախահաշւում։ Այս հանգամանքի մէջ ոչինչ օրհասական, սարսափելի և չարագուշակ բան չը կայ։ Ձեզ յոգնեցնել Ձեր ուշադրութիւնը դէֆիցիտի նշանակութեան վերաբերվող գիտական թէօրիաների մանրամասն բացատրութեամբ, նրա յատկութիւնների և հասցըրած վնասի մասին ճառելով, բայց ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն հանգամանքի վրա, թէ իսկապէս ինչ ծախքեր են մեզ պակասում կընդգծեմ մի անգամ ևս, «սովորական միջոցներ» խօսքը, որովհետև մեզ մօտ արտակարգ միջոցներ կարող են միայն մի տեսակ լինել—այսինքն, որոնք գոյանում են փոխառութիւններից։ Սակայն նրանք չեն բաւականածածկելու պատերազմից առաջացած ծախքերը, անբերրիութիւնից առաջացող ազգաբնակութեանը մատակարարական օգնութիւն տալու և նոր երկաթուղիներ կառուցանելու։ Դիտաւորեալ չեմ յիշեցնում այս հաշւետուութեան մէջ կարճ ժամանակեայ պարտամուրհակների մասին, որովհետև նրանց կանխիկ դրամի փոխելուց ստացված գումարները, որոնք մըտնում են իբրև մնացորդ 1907 թ. նախահաշւի մէջ, բաւական են լիովին հանգցնելու այդ տեսակի ծախքերը։ Ոչ-սովորական բոլոր ծախքերի համար սովորական ծախքերը չը պէտք է առ հասարակ կանոնաւոր աղբիւր ծառայեն և դրա մէջ ես սպառնալիք չեմ տեսնում՝ մեր ֆինանսական կայունութեան համար։ Ի հարկէ, պարոններ, եթէ մեր պետական գանձարանը առատ սովորական եկամուտներ ունենար, որպէս զի նրանցով կարելի լինէր ծածկել ամբողջ նախահաշիւը, հաշւելով արտակարգ ծախքերը, ես մեծ ցնծութեամբ կը հանդիպէի այդօրինակ բերկրալի երևոյթին, չը նայած նրան, որ ֆինանսական գիտութեան ներկայացուցիչները թերևս շատ խիստ և ընդհանրապէս չափազանց արդար կերպով դատապարտէին ինձ. սակայն ես ինձ կը սփոփէի նրանով, որ, կատարված աճագին փոխառութիւններից և մեր փոխառութեան այդօրինակ լարումից յետոյ, չը կայ բնաւ լաւագոյն մի միջոց նրան վերականգնելու և ամրապնդելու համար, ինչպէս ժամանակաւորապէս ամենևին չը դիմել փոխառութեան և թողնել նրան հանգստանալ։ Բայց եթէ այդ չը կայ, բայց և այնպէս մեզ չենք նայի ապագայի աչքերին և չենք հանգստացնի մեզ նրանով՝ թէ այդօրինակ հանգամանքներում իւրաքանչիւր պետութիւն կը դիմէ փոխառութեան և կը կնքէ նրան այդօրինակ գործողութիւնների անխուսափելիութեան և կանոնաւորութեան գիտակցութեամբ։ Խօսելով արտակարգ ծախքերը ծածկող միջոցների բացակայութեան մասին, ես այսօր, ինչպէս և մէկ ամիս առաջ, ելևմտի նախագիծը մտցնելու ժամանակ, աչքի առաջ ունեմ, որ այդ պակասի չափը ուղղակի կախված կը լինի ինչպէս ծախքերի ընդհանուր գումարից, այնպէս և առանձնապէս պետական եկամուտների իսկական հասոյթից։ Այդ առիթով ես ինձ թոյլ կը տամ իմ մտքերը հաստատել Ֆրանսիայի մեծ պետական գործիչ Տիէրի հեղինակաւոր խօսքերով, որը այնքան շատ բան է արել Ֆրանսիայի ֆինանսները կարգաւորելու համար։ Դեռ 1832 թ., իր քաղաքական փայլուն ասպարէզի արշալոյսին՝ Տիէրը ասաց, որ դէֆիցիտը սովորական ծախքերը, սովորական աղբուրների միջոցներով ծածկելու անկարողութիւնն է։ Ամենուրեք և միշտ խօսում են դէֆիցիտի մասին, այն ժամանակ, երբ տարէց տարի աւելացվող սովորական ծախքերը մեծանում են այն աստիճան, որ սովորական հասոյթները սակաւ են հանդիսանում, բայց եթէ պետութիւնը հարկադրված է կատարել արտակարգ ծախքեր մեծ քանակութեամբ, ինչպէս օրինակ պատերազմի ժամանակ, նա պէտք է սովորական եկամուտներով պահէ և ծածկէ ոչ միայն սովորական ծախքերը, այլև փոխառութիւնների տոկոսները. չի կարելի ասել, որ կառավարութիւնը գտնվում է դէֆիցիտի մէջ։ Այս դէպքում կառավարութիւնը գտնվում է իւրաքանչիւր կանոնաւորապէս գործող կառավարութեան դրութեան մէջ, որպիսին սովորական ծախքերը պէտք է ծածկէ սովորական եկամուտներով և փոխառութիւններով վճարէ իր արտակարգ ծախքերը։ Այդ միտքն են երկրորդում մինչև օրս ֆինանսական գիտութեան լաւագոյն ներկայացուցիչները։ Այդօրինակ է, պարոններ, պետական ելևմտի նախագիծը, որ ներկայացրված է քննութեան։ Իմ երկար, յոգնեցուցիչ բացատրութիւնը լիակատար չէր լինի, եթէ ես չը խօսէի այն ընդհանուր գնահատութեան մասին, որպիսին ես անհրաժեշտ եմ համարում անել խղճի պարտականութիւնից դրդված, իբրև Միապետի կամքով նշանակված անձ, որպէսզի կարելի լինի տանել ներկայ րոպէին այդ բարդ և պատասխանատու գործը։

1907 թւի նախահաշիւը ընթանում է զուգահեռաբար վերջին ժամանակի Ռուսաստանի պատմութեան երեք ամենածանր տարիների նախահաշիւների հետ։ Բարեբաղդաբար, նա իր մէջ չէ կրում այն պակասութիւնները, որոնց պէտք է որ պարունակէին անհրաժեշտաբար 1904 և 1905 թւերի նախահաշիւները։ Մենք նորից ելանք արտաքին խաղաղութեան ճանապարհը. Աստուած կը տայ, որ այդ խաղաղութիւնը երկարատև կը լինի. պատերազմի արհաւիրքների հետևանքները արդէն ոչ այնքան ամուր պահած ունեն իրանց անողոք ճանկերում պետական տնտեսութիւնը։

Յուսանք, որ երկու տարվայ անբերրիութիւնից յետոյ Աստուած լաւ բերք կուղարկէ։ Մենք վերադառնում ենք այն ժամանակներին, երբ բիւջէն դարձեալ սկսում են արդէն հաւասարակշռել պետական պահանջներին և այլ ևս կառավարութեան վրա պարտականութիւն չէ դնում արտակարգ միջոցների դիմելու, հաշւեկշռից դուրս աճագին ծախքերը հոգալու համար, ինչպէս որ այդ տեղի ունէր այս վերջին 3 տարին։ Այդ պատճառով կուզեմ հաւատալ և յուսալ, որ մայլ ու ծանր դրութիւնը անցել է արդէն, որ բիւջէի կողմից մենք մօտենում ենք մի այնպիսի նորմալ ժամանակի ու դրութեան, որը աւելի է ապահովում իւրաքանչիւր պետութեան համար այնքան անհրաժեշտ ֆինանսների կայունութիւնը։ Ես կուզենայի փոխել «յուսալ» խօսքը մի ուրիշ աւելի աշխուժացնող բառով, «հաւատալ» բառով և ասել, հաւատալու համար հարկաւոր է մի բան միայն, հարկաւոր է, որ դարերի մեր հայրենիքը թունաւորող խռովութիւնը, հարկաւոր է, որ վերականգնվի խաղաղութիւնը, որպէսզի իւրաքանչիւր մարդ իմանայ, որ իրան հնարաւորութիւն կը տան հանգիստ սրտով աշխատելու, որ նա կօգտվի իր ձեռքերի արդիւնքից, այն ժամանակ դուք կը տեսնէք, թէ ինչպէս շուտով վերականգնվում է մեր խախտված կրեդիտը և ինչպէս շուտով վերադառնում են մեր ֆինանսները այնպիսի դրութեան, որը նրան պատկանում է իրաւունքով, իբրև այնպիսի մի մեծ երկրի ֆինանսներին, որը անսպառ հարստութիւններ ունի և 150 միլիոն աշխատասիրութեամբ օժտված ազգաբնակութիւն։ Դուք, պարոններ, առաջինն էք, որ կոչված էք բիւջէտը քննելու պատասխանատու գործի համար։ Մացրէք և ձեր լուման մեր ֆինանսները բարելաւելու ու ուղղելու մեծ գործի մէջ, կառավարութեան հետ միասին ձեռնարկելով առաջարկած բարդ աշխատանքին։ Դիմում եմ Պետական Դումային խնդրելով հէնց այժմից ևեթ յանձնել ելևմտի նախագիծը Դումայի ընտրած բիւջէտային մասնաժողովին։ Ես թոյլ եմ տալիս ինձ վերջացնել իմ բացատրութիւնները հետևեալ խօսքերով, որը թէև ինձ չէ պատկանում, բայց հաւատացած եմ, որ նրա տակ կը ստորագրեն ձեզանից շատերը. «Երկրի ֆինանսների կառավարելը,—ասաց Բելգիայի ֆինանսների մինիստրը, ներկայացնելով պատգամաւորների պալատին 1906 թւի բիւջէն, մի որևէ կուսակցութեան գործ լինել չէ կարող։ Քաղաքական կռւի համար բացված ասպարէզը չափազանց շատ առիթներ է ստեղծում պառակտումների և յարձակումների համար, բայց և այնպէս նրանից չէ կարելի վանել այն բաները, որոնք ընդհանուր քաղաքացիների սեփականութիւն են կազմում և նրանց չէ կարելի զգալի վնաս պատճառել առանց վտանգելու պետութեան կրեդիտը և նրա բարգաւաճումը»։ (Ծափահարութիւններ աջակողմում)։

(Կը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

Մեր երկրորդ պալատի, Պետական Խորհրդի մէջ նստած ծերունիների մասին խօսելով, Ալէքսանդր Եաբլոնովսկին յիշում է մի գեներալի վերաբերմամբ կազմված անեկդոտը, որի մասին ասում էին, որ նա ոչ թէ զինւորական է, այլ աւելի շուտ «սօցիալիստ», որովհետև նա՝

Ութը ժամ քնում է, ութ ժամ ուտում և ութ ժամ իր բնական կարիքները կատարում։ Այդ կծու կատակը ասել էին իբրև ապացոյց այն բանի, որ զինւորականների համար անհրաժեշտ է վերջնական հասակ սահմանել և այն մարդը, որ ստիպված է իր ժամանակը բաժանել երեք գեներալական «ութժամեակների», չէ կարող կատարել որևիցէ մի բան, որ այսպէս թէ այնպէս զարկ տար հայրենիքի զէնքի փառաւորման։

Բայց եթէ վերջնական սահմանված հասակը անհրաժեշտ է զինւորականների համար, նոյն չափով, եթէ չասենք աւելին, նա անհրաժեշտ է և «խաղաղ պատերազմողների» համար, որոնք կազմակերպում են պետութեան ներքին կեանքը։

Ես, գոնէ, գտնում եմ, որ եթէ պալատում բազմող մարդը առանց ուրիշի օգնութեան չէ կարողանում ոտքի կանգնել քուէարկութեանը մասնակցելու համար, արդէն այդպիսի մարդը իրաւունք ունի «սօցիալիստ» լինելու, այդ բառի գեներալական իմաստով։

Միևնոյն ժամանակ ես բոլորովին անթոյլատրելի եմ համարում եթէ, պալատի նիստերը սկսվելուց առաջ հանդիսականների և ժուրնալիստների օթեակներում մըրմըռալով ասում են.—պարոններ! Նստեցէք տեղներդ. արդէն բերում են նախագահին և այս րոպէիս նիստը կը բացվի... Հաւասարապէս և անհնարին եմ համարում, եթէ որ պալատի ճառ արտասանել կամեցող անդամը չէ կարող ոչ հասնել ամբիոնին և ոչ էլ ամբիոնից իջնել առանց կողմնակի օգնութեան։

Մի խօսքով, ես գտնում եմ, որ վերջնական հասակը պետական մեծ կարևորութիւն ունեցող հարց է և որ այն երկիրը, որտեղ պալատներում բազմում են գեներալական տեսակի «սօցիալիստները», հազիւ թէ բաղդաւոր լինելու շանսեր ունենայ։ Այդ ծերունիների պատուաւոր ընկերութեան մէջ, մեր Մ. Մ. Կովալևսկին ուղղակի պատանու տպաւորութիւն է թողնում. նա այնքան անվայել կերպով երիտասարդ է, այնքան թեթևամիտ կերպով թռվռում է, որ նրա փոխարէն ուրիշներն են իրանց անյարմար զգում. բոլորովին անհոգ թռչնի տպաւորութիւն է թողնում։

Իշխան Տրուբեցկոյի մասին աւելորդ է խօսել անգամ—դա ուղղակի անկարելի բան է։ Ասենք, իշխան Տրուբեցկոյը ինքն էլ երևի հասկանում է, որ նա «անվայել» է դրանց շրջանում։ Ամբողջ ժամանակը մօտ է գալիս մասերի ծայրին, նստում է դռուց և նրա դէմքից երեւում է, որ չափազանց լարված դրութեան մէջ է։

—Աստուած չանի, մի գուցէ յանկարծ փռշտայ, կամ հազայ անզգուշաբար. փռշտայ մէկ էլ կը տեսնես հարևաններից մէկն ու մէկը արդէն մեռնում է...

*

Մայրաքաղաքների բոլոր լրագրները, բացի «Новое Время» ու «Вѣче»-ից, զգածված յօդուածներ են նուիրում Գ. Բ. Իոլլոսին և դատապարտում այդ անմիտ սպանութիւնը։ Մի փոքրիկ գաղափար տալու համար հանգուցեալի գործունէութեան մասին առաջին Պետական Դումայում, առաջ ենք բերում «Новь» լրագրից հետեւեալ քաղուածքը, որ պատկանում է Յ. Յ. Կոկօշկինի գրչին.

Նա այնտեղ չէր աշխատում պերճախօս ճառախօսի դափնիներ վաստակել, այլ ամբիոն էր բարձրանում միայն այն ժամանակ, երբ գիտէր, որ իր խօսքը հարկաւոր է, իսկ այդ խօսքը միշտ էլ գերակշռող էր և վճռական։ Ի դէմս նրա՝ մեր առաջին, անփորձ պարլամենտը ունէր իր փորձառութեամբ և գիտութեամբ անփոխարինելի մի անդամ։ Արևմտեան Եւրոպայի պարլամենտական կեանքի բազմամեայ ուսումնասիրութիւնը նրան դարձրել էր պարլամենտական իրաւունքի և պարլամենտական գործավարութեան համար և նուրբ ծանօթութիւն ունեցող գործիչ։ Նրա հեղինակութիւնը այդ կողմից անվիճելի էր։ Երբ Դումայի գործունէութեան մէջ ծագում էին որևէ առանձնապէս բարդ հարցեր, նախագահ Ս. Ա. Մուրոմցևը ամբիոն էր հրաւիրում Պոլտաւեան նահանգի այդ պատգամաւորին և խնդրում էր ծանօթացնել իր ունեցած տեղեկութիւնների հետ՝ թէ ինչպէս են լուծվում այդօրինակ հարցերը արևմտեան պարլամենտներում։ Նա միևնոյն ժամանակ Ռուսաստանի այն սակաւաթիւ անձերից մէկն էր, որոնք հիմնաւորապէս ծանօթ էին պետական տնտեսութեան և տընտեսական քաղաքականութեան հետ։ Երբ Գորեմիկինի մինիստրութիւնը պահանջում էր Դումայից 50 միլիոն րուբլի գումար յատկացնել սովեալների համար, և այդ նպատակով թոյլ տալ փոխառութիւն կնքելու, Գ. Բ. Իոլլոսը այն մարդկանցից մէկն էր, որոնց վրա դրված էր ամենադժուար և պատասխանատու պարտականութիւնը—մշակել և պաշտպանել ժողովրդական ներկայացուցիչների վստահութիւնից զրկված մինիստրութեան դէմ սովեալներին անընդհատ օգնութիւն մատակարարելու գործը ապահովող օրէնքը։ Եւ այդ պարտականութիւնը նա կատարեց փառաւոր կերպով։ Առաջին և, մինչև այժմ, միակ օրէնքը ժողովրդի մատակարարութեան գործի համար, որ հրատարակվեց 1906 թւին, յունվարի 3-ին սահմանադրական կարգով, որը անցկացնելու համար Գ. Բ. խաղացել է մի այնպիսի աչքի ընկնող դեր. ընդմիշտ կը մնայ իբրև յուշարձան պետական իմաստուն քաղաքականութեան։ Եթէ այդ օրէնքը չը խախտվէր, Ռուսաստանը պաշտպանված կը լինէր Գուրկօ-Լիդվալեան արկածից։

*

«Նոր-Աշխատանք» շաբաթաթերթը իր վերջին համարում (№ 6) ուրախութեամբ արձանագրելով Կրասնովոդսկի սպանութեան առիթով «Ժամանակ»-ի № 51-ում լոյս տեսած «Մինչև Երբ» յօդուածի այն կտորը, որով դատապարտում և անարգանքի սիւնին են խոստանում մեխել ոճրագործին, ով և լինի նա, իր կողմից «Ժամանակ»-ի խմբագրութեան և մանաւանդ «Մինչև Երբ» յօդուածի հեղինակի ուշադրութիւնն է հրաւիրում մի այլ սոսկալի ոճրի վրա, որ նկարագրված է «Կողբի գպրոցի ողբալի վիճակը» խորագրի տակ յօդուածում, «Նոր-Աշխատանք»-ի միևնոյն համարում։ Ինչպէս յայտնի է, 1906 թւի սեպտեմբերին, Կողբում սպանվեց Զաքար Զանփոլադեանցը։ Այդ սպանութեան համար կառավարութիւնը անյապաղ տուգանք պահանջեց Կողբ գիւղից 3550 րուբլի. էկզեկուցիայից խուսափելու համար տեղական մի քանի հարուստներ իսկոյն հաւաքում, վճարում են այդ փողը, մինչև որ յետոյ հնարաւոր լինի գիւղացիներից հաւաքել։ Անա այդ առիթով յօդուածագիր Աւետիս Օհանջանեանցը ասում է.

Զաքար Զանփոլադեանի սպանութիւնը և սրա հետևանք տուգանքը մի կապակցեալ շաբիք դարձան Կողբ գիւղի հասարակութեան, մանաւանդ դպրոցի համար։

Սկզբում գիւղացիք մի կերպ հաշտվում էին տուգանք վճարելու մտքի հետ, հաւատացած լինելով, որ Զաքարը սպանվել է անշուշտ իր հակայեղափոխական ընթացքի կամ իր կատարած որևէ յանցանքի պատճառով։ Սակայն քիչ յետոյ հասարակութիւնը տեղեկացաւ կատարված իրողութեան մասին, որ այդ սպանութիւնը տեղի է ունեցել Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի որոշմամբ, և որ այդ որոշման ամենագլխաւոր շարժառիթը եղել են Զանփոլադեանների ազգականական հին խառը հաշիւները, որոնցով կենտրոնական կոմիտէն թոյլ է տուել իրան զբաղվել «որպէս բացառութիւն»։ Հասարակութեան զայրոյթին չափ չը կար այն առթիւ, որ յեղափոխական կուսակցութեան մի վարիչ մարմին մտնում է ինչ որ հակայեղափոխական ազանների ժառանգական մութ հաշիւների մէջ, սպանում է դրանցից մէկին, և «այդ սպանութեան պատճառով ստիպված է լինում առաջին զրկանքներ կրել և 3550 ր. տուգանք վճարել կառավարութեանը այն աշխատաւոր գիւղացիութիւնը, որի շահերի պաշտպանը պիտի հանդիսանար այդ յեղափոխական կուսակցութեան մարմինը»։ Մեծ իրարանցում ընկաւ գիւղացիների մէջ. շատերը նըրանցից պնդում էին, թէ «Թող վճարեն տուգանքը նրանք, ովքեր յանցաւոր են այդ անարդար որոշման մէջ, իսկ կողբեցիք այդտեղ ոչ մի յանցանք չունեն. մանաւանդ, որ ժողովրդի շահերը և տրամադրութիւնը ամենևին ի նկատի չեն ունեցել որոշում կայացնելիս»։

Անա ժողովրդի այդ տրամադրութիւնը տեսնելով և համոզվելով որ անհնարին կը լինի իրանց փողերը յետ ստանալ, դիմում են զարտուղի միջոցների և «դպրոցի հոգաբարձութեան աջակցութեամբ» կլանում են դպրոցական գումարները իրանց փողի փոխարէն, պահելով միայն 600 րուբլի իբր թէ ուսուցիչների ռոճիկը ամսէ ամիս վճարելու համար.

Բայց այդ գումարն էլ այսօր անամօթաբար վատնել են հոգաբարձուներից մի քանիսը, առանց միւսների գիտութեան, պարտք տալով ինչ որ մարդասպան-սրիկայի, որպէսզի նա ծախսի դատարանի պատժից ազատվելու համար։ Իսկ այդ մարդասպանից երբեւիցէ յետ կստացվեն արդեօք դպրոցի գումարները. շատ կասկածելի է։

Եւ այդպիսի հանգամանքների շնորհիւ Կողբի դպրոցը, որ 3000 րուբլուց աւելի եկամուտ ունի տարեկան, այսօր մնացել է առանց կոպէկի և հազիւ թէ 600 տուն ունեցող Կողբը կարող լինի առաջիկայ տարին դպրոցը պահել, քանի որ հոգաբարձուները մտադիր են նրա եկամուտը յատկացնել տուգանքներին։

Անա դրա վրա է՝ ուշադրութիւն հրաւիրում «Նոր-Աշխատանք»-ը և արդար դատաստան կամ կարծիք սպասում «Ժամանակ»-ից։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձասարի-Վանք գիւղ. (Ջիւանշիրի գաւառ) 12-ին մարտի։ Գանձասարի Վանք գիւղից և ուրիշ հայ գիւղերից, հայ-թիւրքական կոտորածների ժամանակ, Ղլիշլուի Թալանի առիթով, Գանձակի բանտում բանտարկված 17 անմեղ հայ մարդկանց գործի քննութիւնը նըշանակված է Գանձակի նահանգի շրջանային դատարանում, ամսիս 22-ին, Գանձակ քաղաքում, որի համար կանչված են բազմաթիւ վկաներ զանազան գիւղերից։ Բանտարկվածները 19 հոգի էին, որոնցից 2-ը մեռան նոյն բանտում աշնանը, չը կարողանալով տանել բանտի դժոխային կեանքը, սովոր լինելով ազատ օդի։ Այժմս բոլոր վկաները ճանապարհվում են դէպի Գանձակ։ Թուրք ազդեցիկները խոստացել են աջակցել արդարութեան գործին, որոնց շնորհիւ ի զուր տեղից խեղճ ու կրակ, ծխաւոր ու անմեղ մարդիկ արդէն երկու տարի տանջվում են բանտում, իրանց որդոց, ծընողների և սիրելիների կարօտը քաշելով։

Յուսով ենք, որ Թուրք եղբայրները, որոնք արդէն լաւ զգացել են իրանց վըրա կոտորածների «օգտակարութիւնը», չեն զլանայ իրանց օգնութեամբ ազատելու 17 անմեղ մարդկանց Գանձակի բանտից, որոնց մայրերը՝ օրեր ու րոպէներ համարելով՝ սպասում են նրանց, որով ընդ միշտ հաստատած կը լինեն հայերի հետ հաշտութեան կապերը։

Գ. Բ.

ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Մարտի 14-ին առաւօտեան Պետերբուրգում գործադուլ են արել խցան պատրաստող պետական գործարանի բոլոր բաժանմունքների աշխատաւորները։ Բանւորների ամբողջ կազմը՝ 600 հոգուց բաղկացած՝ եկել է այդ օրը գործարան, սակայն մերժել է աշխատել։ Տեղական ոստիկանութիւնը տեղեկանալով այդ մասին՝ շրջապատել է ամբողջ գործարանը։ Վերջինիս կառավարիչը՝ գեներալ Կնիրիմը հրամայում է հեռացնել բանւորներին գործարանից, սակայն ոստիկանութեան ներկայացուցիչը հակառակում է դրան, ի նկատի ունենալով բանւորների խաղաղ տրամադրութիւնը։ Բանւորների միակ պահանջը լինում է—անձամբ տեսակցել ակցիզային հարկերի կառավարչի հետ։ Իբրև պատասխան՝ դրան կախվում է մի գրաւոր յայտարարութիւն, որով յայտնվում է, որ բանւորները մարտի 17-ից արձակվում են՝ ստանալով իրանց վերջական հաշիւները։ Գործադուլ անողները մնալով գործարանում մինչև երեկոյեան ժամը 5-ը՝ ցրվում են։ Գործադուլի հիմնաւոր պատճառ համարվում է վերջին ժամանակներս բանւորներին ապօրինի և անտեղի կերպով գործարանից հեռացնելը։ («Новь»)

—Խարկովի ծայրերում գտնվող մի քանի հացի փուռերում աշխատող բանւորները մարտի սկզբներում գործադուլ են յայտարարել՝ ներկայացնելով մի շարք տնտեսական բնաւորութիւն ունեցող պահանջներ։ Սակայն այդ գործադուլը չէ պաշտպանվում քաղաքի միւս փուռերում աշխատող բանւորների կողմից, հետեւապէս գործադուլ արած բանւորների տէրերը վճռողականապէս մերժում են ներկայացված պահանջները։ Վերջերս գործադուլից յետոյ, բանւորները նախկին պայմաններով նորից ձեռնարկում են աշխատանքի։ («Т.-Пр. Г»)

—Վերջին օրերս Եկատերինոսլաւի հացավաճառ բանւորները, որոնք միութիւն էին կազմել, ներկայացնում են իրանց տէրերին մի շարք տնտեսական պահանջներ։ Փուռերի տէրերը, որոնք վաղուց կազմել են իրանցից արհեստակցական միութիւն, սպառնում են հացավաճառ բանւորներին լոկաուտով, եթէ վերջիններս կը յամառեն իրանց պահանջների մէջ։ («Т.-Пр. Г.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպէս յայտնի է, մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը դժգոհ է այն բանից, որ Պետական Դումայի նախագահը նիստի ժամանակ իրան թոյլ չէր տուել խօսելու. Ստոլիպինը մասնաւոր նամակով յայտնել էր, որ կառավարութեան ներկայացուցիչը իրաւունք ունի Դումայում հերթից դուրս խօսելու։ Այդ նամակին Պետական Դումայի նախագահ Գոլովինը մարտի 14-ին պատասխանել է հետեւեալ նամակով.

«Ես պատիւ ունիմ հաղորդելու հետևեալը. Պետական Դումայի կանոնադրութեան 40-րդ յօդուածի ճիշտ իմաստը վերաբերում է «այն գործերի բացատրութեան, որոնք անմիջական կապ ունեն Դումայի մէջ քննվող խնդրի հետ»։ Որովհետև Կիզիվետտերի յարուցած հարցը նախագահի իշխանութեամբ չենթարկվեց Դումայի քննութեան, այդ պատճառով այն բոլոր բացատրութիւններն էլ, որոնք վերաբերում են յիշեալ հարցին, չէին կարող տեղի ունենալ։ Ուրիշ մեկնութիւններ տալը կարող էր Դումայի նախագահին զրկել Դումայի զբաղմունքները կանոնաւորելու հնարաւորութիւնից։ Իսկ իմանալու համար թէ դուք Կիզիվետտերի հարցի մասին էք խօսք խնդրում թէ ուրիշ բանի մասին, ես դիմեցի նախագահի օգնական Պօզնանսկու աջակցութեանը և եթէ բանից երևար, որ դուք խօսք էք խնդրում Կիզիվետտերի յարուցած հարցի մասին և եթէ այդ հարցը քննվելու լինէր Դումայում, ի հարկէ, խօսքը ձեզ կը տրվէր հերթից դուրս»։

—Պետական Դումայի նախկին անդամ Իոլլոսի սպանութեան առիթով Դումայի նախագահը բազմաթիւ հեռագիրներ է ստանում Ռուսաստանի բոլոր ծայրերում գտնվող օպպօզիցիայի լիդերներից, որոնք իրանց վիշտն ու զայրոյթն են արտայայտում այդ սպանութեան համար։ Առաջարկում են պահանջել կառավարութիւնից դատի ենթարկելու իսկական ռուս մարդկանց լիդերներին, որոնց վրա է ծանրանում սպանութիւնների յանցանքը։

—Լուր է պտտում, որ մինիստրների խորհրդի անդամների շրջանում մասնաւոր կերպով հարց է յարուցված Զատկի տօներին Պետական Դումային արձակուրդ տալու համար: Վճռված է հարցի լուծումը վերապահել իրան Դումային: («Новь»)

—Իլիոդոր վարդապետը հեռագիր է ուղարկել Պօչաեվ, որ Դուման խառնակչութիւններ է անում, օգուտ չը կայ նրանից, ժողովուրդի համար ուղղակի ոչինչ չէ անում: Թող Վօլինը հեռագրով դիմէ Թագաւոր Կայսրին և խնդրէ Դուման ցրելու, ապա թէ ոչ վերջը վատ կարող է լինել: («Р. В.»)

—Դումայի կարգադրիչ մասնաժողովը պրեզիդիումի հետ միասին վճռել է Տաւրիկեան պալատի հսկողութիւնը իր ձեռքն առնել, հեռացնելով Դումայի ոստիկանական պահակախումբը:

—Պետական Դումայի անդամներ՝ Վ. Հեսսեն, Ալեքսինսկի, Ծերեթելլի, Պետրովսկի, քահանայ Տիխվինսկի և ուրիշ սօցիալիստ-յեղափոխական պատգամաւորներ մահվան դատավճիռներ են ստացել յեղափոխութեան դէմ ակտիւ կռիւ մղող միութիւնից: Պետական Դուման մտադիր է հարցապնդում անել կառավարութեանը ռուս ժողովրդի միութեան ձեռնարկած այդ սպանական տերրօրների դէմ:

—Պետական Դումայի անդամ Վ. Հեսսենը պօստով սպառնական նամակ է ստացել, որով նրան մահվան են դատապարտում: Նամակը անստորագիր է և գրված է վարդագոյն թղթի վրա և գրված նոյն [illegible] մէջ: («Русь»)

ՓՈԲԵԴՈՆՈՍՑԵՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Զափազանց հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում «Товарищъ» թերթում պ. Լ. Լվօվը հանգուցեալ Պօբեդօնօսցեվի վերջին տարիների գործունէութեան մասին: Մամուլի մէջ շատ անգամ է գրվել հռչակաւոր «Աստղային պալատի» մասին, որը, այս վերջին ազատագրական շարժումների երկու տարվայ ընթացքում, միշտ վարագոյրի յետևում թագնված՝ ղեկավարել ու ղեկավարում էր մեր երկրի ամբողջ քաղաքականութիւնը: Իսկ թէ ովքեր էին այդ խորհրդաւոր պալատում նստողները, ովքեր էին նրանց մէջ ամենամեծ դեր կատարողները կամ թէ նրանցից իւրաքանչիւրի դերը ո՞ր աստիճանի ու սահմանների էր հասնում, այդ մասին պարզ և որոշ ոչինչ չէր գրվում: Այդ պատճառով էլ ընթերցողին միշտ մնում էր ենթադրութիւններով ու գուշակութիւններով հասկանալ ամեն ինչ: Այժմ պ. Լվօվը բաց է անում այդ խորհրդաւոր պալատի վարագոյրը և յայտնում է, որ «աստղային պալատի» ամենահեղինակաւոր և ամենաազդեցիկ ղեկավարները և ամեն բանի մէջ տոն տուողները երեք հոգի էին, այն է՝ Պօբեդօնօսցեվը, Իգնատիեվը և Տրեպօվը:

Ինչպէս յայտնի է, այդ երրորդութիւնը կազմողներից վերջինը՝ Տրեպօվը մեռաւ ճիշտ այն ժամանակ, երբ իր համախոհների մէջն արդէն որոշ տարաձայնութիւններ էին ծագել և նրանք այլևս չէին կարողանում համերաշխութեամբ ընթանալ: Տրեպօվից յետոյ հանդերձեալ աշխարհը գնաց ոչ-բնական մահով Իգնատիեվը: «Իսկ Պօբեդօնօսցեվի մահով,—ասում է պ. Լվօվը,—անհետացաւ այդ՝ իր ժամանակին այնչափ մեծ իշխանութիւն ունեցող՝ «պալատի» վերջին մօհիկանը:—Եւ այդ երեք անձնաւորութիւնների հետ ծովի յատակը սուզվեց այդ «պալատը» գոնէ իր այն ձևով, ինչպէս որ նա գոյութիւն էր ունեցել, և 1905 ու 1906 պատմական տարիների ճակատագրերն էր տնօրինում:

«1905 թ. սկզբի դէպքերը այն աստիճան նշանաւոր էին, շարունակում է պ. Լվօվը, որ Պօբեդօնօսցեվի ազդեցութիւնը, որ ամբողջապէս ուղղված էր արգելելու սահմանադրութիւն մտցնելուն, ինչ ձևով էլ էր որ սա լինէր, շատ աւելի թոյլ դուրս եկաւ, քան հէնց իրանք՝ դէպքերն էին»:

Ապա պ. Լվօվը ժամանակագրական կարգով վերադառնում է այդ պատմական դէպքերին ու պատմում է, թէ ինչպիսի դեր են կատարել այդ դէպքերի մէջ «Աստղային պալատի» վերոգրեալ հերոսները ընդհանրապէս, և այդ պալատի ամենամեծ մօհիկան Պօբեդօնօսցեվը, մասնաւորապէս:

«Հակառակ Պօբեդօնօսցեվի բոլոր ջանքերին ու խորհրդականներին,—պատմում է պ. Լվօվը,—Պօբեդօնօսցեվը պարտութիւն կրեց, և փետրվարի 10-ի և 17-ի (1905 թ.) խորհրդակցութիւնների ժամանակ վերջնականապէս որոշվեց «զեմսկի սօբոր» հրաւիրել, որը ներկայումս «բարեյաջողութեամբ» գոյութիւն ունեցող սահմանադրութեան կարապետը պիտի լինէր: 1905 թ. փետրվարի 17-ին արդէն յանձնվել էր Երմօլովին ծրագիր կազմել, թէ ինչ ձևով պիտի հրաւիրվի «սօբորը», և այդ որոշումով էլ Ցարսկոյէ Սելօյում եղած մինիստրները հեռացան այնտեղից երեկոյեան ժամը 5-ին: Բայց դրանից դեռ մի քանի օր առաջ, Պօբեդօնօսցեվը, որ այդ ժամանակ տառապում էր անկողնում, Տրեպօվի միջոցով յայտնի մանիֆեստի ծրագիրն էր ուղարկել, որը լոյս տեսաւ «Прав. Вѣст.» պաշտօնական օրգանում, փետրվարի 18-ի առաւօտը: Երբ մինիստրները գնացին Ցարսկոյէ Սելօյից, նրանց հետ վերադարձաւ և Տրեպօվը, սակայն, հէնց նոյն օրը սա, Պօբեդօնօսցեվի հետ խորհրդակցելուց յետոյ, նորից գնաց Ցարսկոյէ Սելօ, և հէնց դրա հետևանքն էր, որ յիշեալ նշանաւոր մանիֆեստը լոյս տեսաւ «Прав. Вѣст.»-ում, իսկ մինիստրներն էլ իբրև հակակշիռ այդ մանիֆեստի, պնդեցին, որ հէնց նոյն օրը հրատարակվի Պետական Դումա հրաւիրելու ռեսկրիպտը:

«Այդ օրվանից Պօբեդօնօսցեվը, կարծես թէ, հեռանում է քաղաքականութիւնից և ամբողջապէս «իր հիւանդութիւնով է զբաղվում»: Սակայն շատ սխալ կը լինի մտածել, թէ նա իրապէս հեռացաւ քաղաքական գործերից: Նա իր ամբողջ ոյժը միշտ գործ է դնում, որպէսզի լիկվիդացիայի ենթարկի սահմանադրութիւնը, և ամեն մի աչքի ընկնող մօմենտից նա օգտվում է, որպէսզի սահմանադրութեան դէմ դուրս գայ թէ բերանացի և թէ մանաւանդ գրաւոր կերպով, շարունակ այդ մտքով իր կողմից «զեկուցումներ» և «ենթադրութիւններ» ուղարկելով:

«Բայց Պօբեդօնօսցեվի համար աւելի ու աւելի դժուար է դառնում մաքառելը: Այդ ժամանակ Տրեպօվը, որը անդամ էր նշանակվել այն յատուկ խորհուրդի, որ Սօլսկու ղեկավարութեամբ պիտի քննէր բուլիգինեան ծրագիրը, ոգևորվում է «Դումա գումարելու գաղափարով» և Պօբեդօնօսցեվը ժամանակաւորապէս զրկվում է, ինչպէս ստորև կը տեսնենք, մի զօրաւոր դաշնակիցից:

«Եւ օգոստոսի 6-ին, Սօլսկու մասնաժողովում փոփոխութիւնների ենթարկված բուլիգինեան ծրագիրը հրատարակվում է:

«Հոկտեմբերին, երբ սկսվեցին շարժումները և դրանց հետ միաժամանակ Վիտտէն սկսեց բարձրանալ, Պօբեդօնօսցեվը նորից իր «ենթադրութիւնները» ներկայացրեց, որոնց մէջ նա պնդում էր, որ դիկտատուրա նշանակվի, և այդ պաշտօնի համար նա հանգուցեալ Ա. Պ. Իգնատիեվի թեկնածութիւնն էր պաշտպանում:

«Այնուամենայնիւ Վիտտէն յաղթեց:

«Վերջնականապէս պարտված Պօբեդօնօսցեվը մինչև իսկ պաշտօնապէս էլ է հեռացվում իր պաշտօնից:

«Բայց դրա հետ միաժամանակ նա նորից դաշնակցութեան մէջ է մտնում Տրեպօվի հետ և հէնց այդ ժամանակ, այսինքն՝ 1905 թ. հոկտեմբերի վերջին, վերջնականապէս կազմակերպվում է «Աստղային պալատը», գլխաւորապէս Տրեպօվի, Իգնատիեվի և Պօբեդօնօսցեվի ղեկավարութեամբ:

«Դեկտեմբերի վերջերում, երբ բռնկված ապստամբութիւնների ազդեցութեան տակ նորից դիկտատուրայի մասին միտք է յղանում, Պօբեդօնօսցեվը դարձեալ պնդում է սահմանադրութիւնը ոչնչացնելու մասին, բայց նորից անյաջողութեան է հանդիպում:

«Միևնոյն ժամանակ նա անդադրում եռանդով մաքառում է Վիտտէի դէմ: Մի քանի անգամ նա կարծես թէ աջողութեան նախօրեակումն է, և վերջապէս, Դումայի գումարելուց մի քանի օր առաջ, նրա մաքառումը կոմսի դէմ՝ պսակվում է յաղթանակով:

«Դուման բացվում է:

«Պօբեդօնօսցեվը, չը նայելով որ նրա առողջութիւնը կատարելապէս քայքայված է, եռանդուն մաքառումն է սկսում Դումայի դէմ: Նա ուշադրութեամբ հետևում է Դումայի գործունէութիւններին և ամեն մի առիթից օգտվում է, ապացուցանելու համար նրա գոյութեան վտանգաւոր լինելը:

«Նա էր, որ եռանդուն կերպով պահանջում էր, որ Գօրեմիկինի դեկլարացիան խիստ ոճով լինի գրված, յուսալով, երևի, որ այդպիսով Դուման էլ ստիպված կը լինի խիստ քայլեր անել, որով և առիթ կը տայ նրան ցրելու:

«Միևնոյն ժամանակ նա ամեն կերպ աշխատում է մաքառելու այն՝ շրջաններում հասունացած՝ վախի դէմ, թէ Դումայի ցրելը կարող է լուրջ խլրտումներ առաջացնել երկրում: Այդ բանի մէջ նրան որոշ չափով օգնում էին մինիստրներից մի քանիսը, այն է՝ Ստոլիպինը, Կոկովցեվը, Շվանեբախը և ուրիշները, որոնք վախ են կրում, թէ Դումայի հաստատ դիրք ստանալուց կարող է կաբինէտի փոփոխութիւն տեղի ունենալ, ուստի և իրանք կը զրկվեն պորտֆէյլներից:

«Եւ մայիսի վերջին, շրջաններում արդէն սկսում են մտածել, թէ Դուման ցրելը «բոլորովին այնչափ էլ սարսափելի չէ»:

«Միացեալ ջանքերով աջողվում է վերջապէս այդպիսի տրամադրութիւն ստեղծել: Եւ յունիսի 1-ին արդէն Պետերհօֆում Դուման ցրելու խնդիրն է քննվում: Դուրս է գալիս, որ «վախը» դեռ բոլորովին փարատված չէ, ուստի և առաջարկութիւն է ծագում կիսամիջոցների դիմել. ցանկանում են Դուման արձակել «ամառային արձակուրդով»: Բայց այդ միտքը դեռ նորութիւն է և պալատականները վճռողականութիւն չեն ցոյց տալիս:

«Յունիսի 1-ին խնդիրը նորից քննվում է Պետերհօֆում: Յունիսի 4-ին դարձեալ է քննվում: Այդ ժամանակ Պօբեդօնօսցեվը ստիպված է իր բոլոր ոյժերը լարել: Շրջաններում տիրող ծայրահեղ անվճռողականութիւնը վերին աստիճանի հակասական դրութիւններ է ստեղծում: Մի կողմից Դուման ցրելու մասին են խօսում, իսկ միւս կողմից Շիպօվի մինիստրութեան մասին:

«Երբ, Պօբեդօնօսցեվի կարծիքով, հողը արդէն բաւականին պատրաստված էր, նա յունիսի սկզբներում նորից «զեկուցում» է ներկայացնում, որի մէջ ուղղակի ապացուցանում է, թէ Ռուսաստանը դեռևս չէ հասունացել սահմանադրութեան համար և թէ անհրաժեշտ է նրան լիկվիդացիա անել: Եւ նա ծրագիր է ներկայացնում, թէ ինչ ձևով կարելի է Դուման հետզհետէ ոչնչացնել:

«Ի նկատի առնելով այն հանգամանքը,—ասված է այդ ծրագրի մէջ,—որ Դումայի գործունէութեան շրջանում, կառավարութեան «թոյլ վարմունքի պատճառով», երկրում շատ բան տակն ու վրա է եղել և խիստ զարգացել է ժողովրդի «կրամօլային» տրամադրութիւնը, ուստի «պէտք եղած» կարգը վերականգնելը այժմ ամենաբարդ խնդիրն է, որը լուծելու համար մեծ զգուշութիւն է հարկաւոր:

«Այդ զգուշութիւնը, Պօբեդօնօսցեվի առաջարկութեամբ, պէտք է արտայայտվի նրանով, որ ամենից առաջ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել բորբոքված կրքերը խաղաղացնելու համար: Դրա համար պէտք է փոխել մինիստրութիւնը, որը մեծամասնութեան դժգոհութիւնն է յարուցել: Դրա հետ մէկ տեղ Պօբեդօնօսցեվը նախազգուշացնում էր, որ բոլորովին չը պէտք է վախենալ մինչև իսկ լիբերալ մինիստրութիւնից, որովհետև «մինիստրութիւնը փոխելը շատ աւելի հեշտ է, քան Դուման ոչնչացնելը»: Իսկ լիբերալ մինիստրութիւնը կարող է նպաստել երկրի մի որոշ չափով խաղաղվելուն: Այսպիսի մինիստրութիւն նշանակելով՝ հնարաւոր կը դառնայ Դումային արձակուրդ տալ և վերջ դնել նրա գործունէութեան առաջին նստաշրջանին:

«Պօբեդօնօսցեվի կարծիքով դա միակ ելքն է դուրս գալու համար այն դրութիւնից, որ ստեղծվել է «սահմանադրութիւնով ոգևորվելու» շնորհիվ:

«Իսկ ինչ վերաբերում է Դումայի երկրորդ նստաշրջանի գումարելուն, այդ հարցն էլ, Պօբեդօնօսցեվի զեկուցման համաձայն, կը լուծէ հէնց ինքը պատմութիւնը: Զեկուցման մէջ նա յիշում է, որ եւրոպական պետութիւնների պատմութեան մէջ քիչ չեն օրինակներ, երբ գումարված ժողովրդային ժողովները արձակվել են և այլևս չեն հրաւիրվել: Պօբեդօնօսցեվը մանաւանդ մանրամասն կերպով կանգ է առնում Թիւրքիայի պատմութեան վրա, ուր 25 տարուց աւելի է, որ մի անգամ ցրված ազգային ժողովը այլևս չէ գումարվում:

«Այդ զեկուցումը շատ մեծ տպաւորութիւն թողեց և այդ րօպէից աւելի ու աւելի են խօսում Դուման ցրելու մասին:

«Այնուամենայնիւ Պօբեդօնօսցեվը դեռ էլի մօտ մի ամիս ստիպված է մաքառել: Տրամադրութիւնը շարունակ երերվում է Դուման ցրելու և կաբինէտը փոխելու մէջև:

«Յուլիսի սկզբներին, վերջապէս, դրութիւնը սուր կերպարանք է ստանում: Պօբեդօնօսցեվը ուշադրութեամբ հետևում է կատարվող դէպքերին և յուլիսի 8-ին, զգալով որ վճռողական րօպէն հասել է, նորից զեկուցում է ներկայացնում, որի մէջ յամառութեամբ Դումայի արձակումն էր պահանջում:

«Այդ զեկուցման մէջ հետևեալ որոշ պատճառաբանութիւններն էին տրված.

1) Դուման գնալով աւելի ու աւելի է իր վրա գրաւում ժողովրդի ուշադրութիւնը, գրգռելով նրան կառավարութեան դէմ իր անիրագործելի խոստումներով մի կողմից և իր խիստ վերաբերմունքով դէպի գործադիր իշխանութիւնը—միւս կողմից: 2) Բանակի մէջ առաջացած քայքայումը, որ սկսել է Դումայի գործունէութիւնից անմիջապէս յետոյ, սպառնում է կատարելապէս ոչնչացնել դիսցիպլինան: 3) Անհնար է զօրաւոր և եռանդուն միջոցներ ձեռք առնել, քանի որ գոյութիւն կունենայ Դուման, որը խանգարում է կառավարելու գործը իր զանազան հարցապնդումներով և այդպիսով արգելում է կառավարութեանը՝ իր պարտականութիւնները կատարելու: 4) Դումայի և մանաւանդ այնտեղ արտասանված ճառերի միջոցով, որոնք ստենօգրաֆիկ կերպով տպագրվում և տարածվում են ամբողջ երկրի մէջ, մինչև օրս չտեսնված, ամենազօրաւոր յեղափոխական պրօպագանդն է մղվում: 5) Քայքայումը և բարձր շրջանների մէջ է մտել. այդ պարզ է նրանից, որ Պետական Խորհուրդն էլ, մինչև իսկ նշանակովի անդամներն էլ կառավարութեան ձգտումներին օպոզիցիա են [illegible] և, պրօպագանդայի ազդեցութեանը ենթարկվելով, քննադատում են նրա գործունէութիւնը, ինչ շատ պարզ երևաց վերջին նիստի ժամանակ:

«Այս բոլորի հիման վրա Պօբեդօնօսցեվը անհրաժեշտ էր համարում վճռողական կերպով վարվել երկու հաստատութիւնների հետ էլ և սկսել կարգը վերականգնել, քանի դեռ ուշ չէ:

«Այդ զեկուցումը վճռական ազդեցութիւն ունեցաւ և փութացրեց խնդիրը:

«Այդ ժամանակից ի վեր Պօբեդօնօսցեվը աւելի ու աւելի է զառամում և հետզհետէ հեռանում է բեմից: Ճիշտ է, նա դեռ էլի հետևում է քաղաքականութեանը և երբեմն-երբեմն «զեկուցումներ» է ներկայացնում, որոնց մէջ միշտ յիշեցնում է և Թիւրքիայի մասին, որը մինչև օրս էլ իր արձակված պարլամենտը չէ հրաւիրում, և այն մասին, թէ անհրաժեշտ է Դուման լիկվիդացիայի ենթարկել, թէկուզ դրանից առաջ լիբերալ մինիստրութիւն նշանակելով:

«Նա մինչև իսկ շատ էր աշխատում, որ երկրորդ Դուման բոլորովին չը հրաւիրվի: Բայց այդ նրան չաջողվեց:

«Մինչև վերջին օրերը, ըստ երևոյթին, նա չէր հրաժարվում այն մտքից, որ անհրաժեշտ է երկրորդ Դումայից էլ ազատվել, և անկողնում գամված, նա միշտ հետևում էր կատարվող անցքերին:

«Թուցէ,—վերջացնում է իր պատմութիւնը պ. Լվօվը,—նա դեռ «աջողութիւն ունենալու» մասին էր երազում, բայց ճակատագիրը այլ կերպ վճռեց»:

Ռ.

ԱԼԱԴԻՆԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է, առաջին Պետական Դումայի անդամ Ալադինը գտնվում է Նոր-Աշխարհում և բուռն ագիտացիա է մղում ի նպաստ ռուս ժողովրդի ազատագրական դատի: Ալադինը, հրապարակական դասախօսութիւններում, մերկացնում է ռուս բիւրոկրատիայի ոճիրները, փառաբանում՝ աշխատող ու տանջվող Ռուսաստանի հերոսական կռիւներն ու գեղեցիկ յոյսերը, և հրաւիրում ամերիկական հասարակութիւնը՝ բարոյական, ֆինանսական բոյկօտի ենթարկել ռուս կառավարութիւնը:

Ալադինը, մարտի 4 ին (ն. տ.) խօսեց Նիւ-Եօրկում, «Կարնեկի» հօլում, 3000 հանդիսականների ներկայութեամբ, որոնց շարքում կային յայտնի ամերիկացիներ:

Ժողովին նախագահում էր դոկտոր Լ. Էբոտ: Նախագահը, ժողովը բաց անելով յայտնեց, որ իրանք հաւաքված են բողոքելու համար Ռուսաստանի այժմեան կացութեան դէմ:

—Մենք այստեղ չենք ժողովված, շարունակեց նախագահը, խորհելու այն կառավարական ձևի վրա, որը պէտք է հաստատել Ռուսաստանում: Մենք չենք եկել նոյնպէս ջատագովելու ամերիկական ռէժիմն ու օրէնքները Ռուսաստան մտցնելու պահանջը: Մենք եկել ենք այստեղ պնդելու, աղաղակելու, որ ռուս ժողովուրդն էլ պէտք է վայելէ կեանքի և ինչքի ապահովութեան տարրական իրաւունքները:

«Ռուսաստանում դրութիւնը այսպէս է. կամ այն է, որ կառավարութիւնը կարող է զսպել վերջին ամիսներում կատարված ջարդերը, բայց չէ ցանկանում, և այդ դէպքում մի անհանդուրժելի դեսպօտիզմ, բռնակալութիւն է, և կամ անկարող է զսպել, եթէ նոյնիսկ ցանկանայ, և այս դէպքում մի անհանդուրժելի անզօրութիւն է: Եւ, յամենայն դէպս, այս կամ այն պարագայում, անտանելի կառավարութիւն է:

«Ասում են, թէ ռուս ժողովուրդը անընդունակ է ազատութեան: Ես ասում եմ, որ ոչ մի ժողովուրդ, ե՞ւ է անտարբերութեամբ չէ ճկում իր գլուխը անարդարութեան առաջ, ընդունակ չէ դեսպօտիզմը տանելու»:

Այնուհետև նախագահը խօսքը Ալադինին ուղղելով՝ ասաց.

«Մենք չենք հաւաքված այստեղ դատելու համար ձեր գործելակերպը, դատապարտելու կամ գովաբանելու նրան. այլ եկել ենք արտայայտելու մեր բուռն համակրանքները դէպի ձեր ժողովուրդը, որ այժմ ճիգեր է գործ դնում դէն շպրտելու բռնակալական անտանելի լուծը և հաստատելու նրա տեղ այնպիսի կառավարութիւն, որի հովանու տակ իւրաքանչիւր քաղաքացի կարող լինի վարել ազատ, բաղդաւոր կեանք»...

Նախագահի այս խօսքերից յետոյ վեր կացաւ Ալադինը և ասաց.

—Առաջին հարցը, որ ուղղվում է ինձ, այն է՝ թէ ռուս ժողովուրդը կարո՞ղ է ձեռք բերել ազատութիւն. արժանի՞ է նրան: Պարոններ և տիկիններ, խնդրում եմ մի ուղղէք ինձ այդ հարցումը: Այլ այցելեցէք ձեր ազատութեան խորանները և նայեցէք մինչև ամպերը բարձրացող պատերի վրա քանդակված անունները... Մենք, հակառակ ներկայ կառավարութեան ամենակատաղի ընդդիմութիւններին, յառաջ տարանք ժողովրդի կրթութեան գործը այնպէս, որ ամեն գիւղում ունենք դպրոցներ, որոնք ներկայ սերնդի առնուազն կէսին կարող են դաստիարակել... Մեր տենչանքներն արձագանք գտան առաջին Դումայի կամարների տակ, ոչ թէ Դումայի մի մասի, այլ ամբողջութեան կողմից, այսինքն 440 պատգամաւորների 433-ի քուէով: Մենք ընդհանուր ներում, ամնիստիա պահանջեցինք այն բոլոր դատապարտվածների համար, որոնք քաշում էին իրանց մեղքը բանտում, ազատութեան անունով կռւած լինելու պատճառով: Մենք կամենում ենք ջնջել այն բացառիկ օրէնքները, որոնց շնորհիւ գիշերվայ ամեն ժամին, մեր բնակարաններն անապահով են. այդ օրէնքի տակ մենք վստահ չենք ապահովութեանը համար մեր որդիների, որոնք կարող են զինվորները գցվել կամ աքսորվել. այդ օրէնքի տակ մենք վստահ չենք ապահովութեանը համար մեր աղջկների, որոնք կարող են յանձնվել կօզակներին կամ ոստիկաններին՝ գոհացնելու նրանց քմահաճոյքը:

«Մենք պահանջում ենք իրաւունք՝ հսկելու մեր երկրի ֆինանսների վրա: Մենք պահանջում ենք պատասխանատու մինիստրութիւն, Դումայի առաջ: Դրա փոխարէն յանձն ենք առնում խաղաղացնելու երկիրը, դադարեցնելու արիւնահեղութիւնը մի քանի օրվայ ընթացքում: Թէ մենք ունենք երկրի վրա պէտք եղած բարոյական ազդեցութիւնը, թէ ո՞րքան արժէք ունեն այս խոստումները—կարող էք դատել հետևեալ փաստերից.

«Անցեալ տարի երբ Դուման շարունակում էր իր նիստերը, և մեր ու կառավարութեան միջև զինադադար էր կնքված, մինիստրները գնում էին Դումա բաց կառքերով և ոչ ոք նրանց մի մազին անգամ չէր դիպչում: Դա ցոյց է տալիս ոստիկանութեան և ժողովրդի կողմից պաշտպանվելու զանազանութիւնը:

«1906 թուի յունվարին, երբ մեր գիւղացիները մռայլ էին տրամադրված դէպի իրանց ապագան, անկարգութիւնների թիւը հասաւ 282-ի: Փետրվար ամսում, երբ տարածվեց Դումայի ընտրութեան աւետիսը, անկարգութիւնների թիւը իջաւ ...1-ի: Մայիսին, երբ Դումայի արձակման առաջին շշուկները ծաւալվեցին, անկարգութիւնների թիւը հասաւ 61-ի, յունիսին, երբ ամեն յոյս կորչելու մօտ էր, հասաւ 235-ի, իսկ երբ Դուման ցրվեցին, բարձրացաւ 300-ի: Բայց երբ սեպտեմբերին ունեցինք երկրորդ Դումայի լուրը, անկարգութիւնների թիւը իջաւ նորից 73-ի, իսկ ներկայումս դարձեալ ոչինչ չը կայ: Միթէ այս փաստերը ապացոյց չեն, որ մենք ունենք բարոյական որոշ ազդեցութիւն ժողովրդի վրա»...

Յետոյ ծանրանալով այն սոսկալի երկիւղի վրա, թէ կառավարութիւնը պիտի յամառի իր նախկին, հակաժողովրդական քաղաքականութեան մէջ և ժողովրդին պիտի հրաւիրէ կռւի, աւելացրեց.

—Ես կարծում եմ, որ այդ դէպքում, Ռուսաստանը դարձեալ կը հանդիսանայ խռովութիւնների թատերաբեմը: Թէ ինչ ձև կարող են ստանալ այդ խռովութիւնները, չը գիտեմ: Հաւանականաբար, նորից հնչէ ընդհանուր գործադուլի նշանաբանը: Մաղթենք, որ բաղդը խնայէ մեր ժողովրդին դառնութեան այդ բաժակը: Բայց եթէ այդ օրը գայ, ես, յանուն ռուս ժողովրդի, ամբողջ պատասխանատուութիւնը ծանրացնում եմ ներկայ կառավարութեան և ռէակցիայի ներկայացուցիչ բարձրագոյն իշխանութեան խղճի վրա:

«Ես եկել եմ Ամերիկա խնդրելու, առանձնապէս ձեր ժողովրդից, որ փող չը տան ռուս կառավարութեան՝ թնդանօթներ գնելու. այլ թոյլ տան, որ ռուս ժողովուրդը կռւի և ձեռք բերէ իր ազատութիւնը: Խնդրում եմ, չը տաք ռուս կառավարութեան այն օգնութիւնը, որ անկարող է այժմ ստանալ նա Լօնդօնում կամ Պարիզում: Ես, ուղղելով ձեզ այս խնդիրքը, վստահ եմ, որ ունէք ձեր սրտի խորքում բաւականաչափ համակրութիւն, մերժելու ռուս կառավարութեան ամեն աջակցութիւն: Խնդրում եմ, յանուն ձեր փառաւոր անցեալի, վերանորոգեցէք ներկայ Ռուսաստանը ձեր ֆինանսական հրապարակից: Իսկ եթէ երբեք տաք ձեր դօլարները, յետ ստանալիս՝ պիտի տեսնէք, որ նրանց իւրաքանչիւրը ներկված է մեր կանանց և զաւակների արիւնով:

«Թուցէ շուտով հնչէ հայրենիքիս ազատութեան յաղթական կոչը: Այն ժամանակ կը խնդրէի, որ իբրև ազատ ժողովուրդ, տեղ տաք մեզ ձեր կողքին, հաւասար ազատութեան, հաւասար իրաւունքների աշխարհում...»:

Ալադինի վերջաբանը ողջունվեց ծափահարութիւնների մի իսկական փոթորիկով...

Ալադինից յետոյ խօսեցին մի քանի ուրիշ հռետորներ, որոնց շարքում, մի ռուս գաղթական, Չայկովսկի, որ նկարագրեց մի դեռատի ռուս օրիորդի, Բաուիկօվի տանջանքները Րիգայի բանտում, նրա մարտիրոսութիւնը ոստիկանութեան ձեռքով:

—Ռուսաստանը, բացագանչեց Չայկովսկի բուռն ծափերի մէջ, իր բառը առնելու չափ զօրաւոր է: Ո՛չ մի ազգ կարող է ազատվել մի այլ ազգի միջամտութեամբ, եթէ նա արժանի չէ իր ազատութեան:

Ժողովը ընդունեց մի բանաձև՝ բողոքելու ամերիկեան կառավարութեան սխալ քայլերի դէմ: Նրա տակ ստորագրեցին պաշտօնական և անպաշտօն անձինք՝ կոնգրեսի անդամներ, եպիսկոպոսներ, դատաւորներ, պրոֆեսորներ, դոկտորներ, ուսանողներ, առևտրականներ, արհեստաւորներ, բանւորներ և այլն...

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գօրիս, մարտի 13-ին

Ամենքիս յայտնի է, թէ թուրքերը դեռ անցեալ արիւնոտ օրերում անգամ ինչպիսի յանդգնութեամբ իրանց մօտով անցնող զօրքին, գեներալին և գաւառապետին հրացանային կրակով դիմադրութիւն ցոյց տուին, գնդակների տարափ թափեցին և դարձեալ անպատիժ մնացին:

Մեր գաւառում պատահած նման դէպքերը հեռագրերով և թղթակցութիւններով յայտնել ենք իր ժամանակին «Մշակին», սակայն դէպքերը իրար յաջորդելով հանդերձ, թուրքերը միշտ անպատիժ են մնացել: Եթէ թուրքերի այդ յանդուգն քայլը գոնէ մի անգամ թէթև կերպով պատժվէր մինչև այժմ, մենք ներկայ զինուորական ծանր դրութեան մէջ երբէք նման դէպքերի չէինք հանդիպի:

Բերենք անցեալներից մի քանի դէպքեր:

Դէպի Մինքէնդ գնալիս գաւառապետ Միտկեվիչ՝ ամբողջ երկու շաբաթ ստիպված էր կռւելու իրան դիմադրող Հաջիսամլուի թուրք բազմութեան հետ, նոյնիսկ թնդանօթային կրակ բացելով նրանց վրա:

Հաքառուի հովտում, Նաման անուն կրող գետի երկու ափերում տարածվող մի շարք գիւղեր, (Ալիանլու) հարիւրեակ կօզակներին թէ ինչպիսի գնդակահարութեամբ խափեցին, այդ ևս ճշմարտութիւն է:

Գեներալ Բաուէրը, երբ Գօրիսից անցնում էր Ղափան, Եմազլուի մօտ, մի նեղ կիրճով անցնելիս, ստիպված էր դիրքերից տեղացող փամփուշտներից ազատվելու համար՝ քարերի տակ մտնել, ձիգ ու կուչ անել. այդ ևս ճշմարտութիւն է:

Սիսիանի Շամբ թուրքական գիւղում անցեալ սեպտեմբերին ինչպէս կօզակին զինաթափ արին, ձին խլեցին և իրան էլ վիրաւորված բաց թողին, այդ ևս իրողութիւն է:

Սիսիանի Ղալաչի հայ գիւղի վրա յարձակում գործած ժամանակ, հայերին օգնութիւն գնացող կօզակներին ևս թուրքերը յետ դարձրին իրանց բռնած դիրքերից թափվող գնդակների տարափով, որից երկու ձի միայն թեթև վէրք ստացան:

Այլ էր դրութիւնը անցեալում, սակայն այլ է այժմ. զինուորական ճնշող դրութիւնը անգամ նրանց արգելք չէ լինում նման դէպքեր կրկնելու և այժմ:

Երէկ, ամսիս 12-ին Սիսիանից Գօրիս եկաւ մէկ վիրաւոր ստրաժնիկ: Նա պատմեց, որ I գաւառամասի պրիստաւը, սիսիանցի Մէհտի-Կուլի անունով մէկ թուրքի իր հսկողութեանն է յանձնում Գօրիս բերելու և քննիչին ներկայացնելու: Երբ հասնում է Գօրիսից 10 վերստ հեռաւորութեան վրա գտնվող գետին, թուրքը յարձակվում, խլում է նրա թիկունքից կախած հրացանը, ուղղում է ստրաժնիկի վրա, կրակում և աջ թևը ծանր կերպով վիրաւորում է: Երբ ստրաժնիկը ընկնում է ձիուց ցած, թուրքը մօտ է վազում, վերցնում է փամփուշտակալը ու փախչում:

Վիրաւոր ստրաժնիկը եկաւ Գօրիս իր ձիով և ներկայացաւ վարչութեան:

Վիրաւոր ստրաժնիկը նոյն Սիսիան գիւղից է. դէպքի մանրամասնութիւնը պարզում է, որ ստրաժնիկը և թուրքը՝ Մէհտի-Կուլին, նախապատրաստ են եղել և պայմանաւորված:

Կառավարութիւնը թէ ինչ միջոցի կը դիմէ այդ առիթով, այդ ինքը գիտէ:

Սազանդարեան

ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՑ ՄԻ ՆՄՈՒՇ

(Նամակ Սիմֆերոպոլից)

Մարտի 13-ին

Այսօրվայ ծխական ժողովը երրորդն է, որ կայանում է տեղիս հայոց ծխական ուսումնարանի դահլիճում՝ Աստուածածնայ եկեղեցու համար նոր երեցփոխ և երկու հոգաբարձու ընտրելու:

Ինչպէս ամեն ժողովներին, այնպէս և այս վերջինին, որը կայացաւ ամսիս 11-ին, ուսուցիչ պ. Վարդան Բաբեանի նախագահութեամբ, մեր անտարբեր, հասարակական գործերի մասին չը մտածող անհոգ ժողովուրդը փառաւորապէս բացակայում էր: Սիմֆերոպոլի պէս հայաշատ քաղաքում, որը ունի 250 տուն ժողովուրդ, ժողովի եկած էին 37 հոգի: Փա՛ռք և պատիւ քեզ հայ ժողովուրդ, որ ունեցել ես այսպիսի «ընտիր» զաւակներ:

Պ. Նախագահը գեղեցիկ կերպով խօսեց ժողովուրդի հասարակական գործերում ունեցած իրաւունքների մասին, յայտնեց, որ ժողովուրդը այսպէս անտարբեր է վերաբերվում դէպի իր իրաւունքները, երբ նրանք իր ձեռին են և լալիս է նրանց վրա ու փնտռտում նրանց, երբ նրանք խլված են լինում:

Վերջապէս՝ նախագահը ժողովը բացված համարեց:

Նախ թերթիկներով թեկնածուներ առաջարկվեցան պ. պ. Սպէնդիարեան, Ալեանակի և Պօպօվեան: Այս անձերին գաղտնի քուէարկութեան ենթարկելուց յետոյ՝ ձայների մեծամասնութեամբ երեցփոխ ընտրվեց պ. Սպէնդիարեանը, իսկ հոգաբարձուներ՝ պ. Միք. Ալեանակի և Պօպօվեան: Երեքն էլ տեղիս հայ համայնքի պատուաւոր անձերից են: Սրանց ցանկանում ենք երեքին էլ եռանդուն և յաջող գործունէութիւն...

Ընթերցող, աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել մեր նախկին երեցփոխ պ. Բուշնարեանի մասին, որ իր պաշտօնավարութեան ժամանակամիջոցը չը լրացած՝ հրաժարվեց պաշտօնից: Ցաւելով պէտք է ասել, որ այնպիսի մի եռանդուն և հասարակութեան օգտին ծառայող ազնիւ գործիչ, որպիսին է պ. Բուշնարեանը, հեռացաւ հասարակական գործերից: Այն ինչ մեր ներկայ, շահասիրական, եսասէր դարում շատ հազուագիւտ են այդպիսի գործիչները. մեր համայնքը մեծ կարիք էր զգում նրա պէտքներին:

Ցաւալի է ասել, բայց իրողութիւնը այս է. անցեալները «Նոր-Կեանք»-ի № 9-ում տպած էր, թէ պ. Բուշնարեանը, զզվելով մեր բիւրօկրատ, շահախնդիր տիրանդալ հոգևորականների դաւերից և ոտնձգութիւններից, հեռանում է: Վերջինների անիրաւ գործերի դէմ նա երկար կռւի մղեց, օգտվելով պատուական «Մշակ» լրագրի էջերից և այժմ հեռանում է, առ միշտ խզելով յարաբերութիւնները նրանց հետ:

Ականջդ կանչէ, Բենիկ վարդապետ: Եւ որտեղից աշնան ծաղկի պէս բուսար մեր թեմում: Քո քաջագործութիւնները լսելով մեր ականջները ծանրացան:

Իբրև երեցփոխ և միևնոյն ժամանակ բարձր կրթութեան տէր. պ. Բուշնարեանի երեցփոխութեան ժամանակ կազմակերպվեց եկեղեցական քառաձայն խումբը, որը այժմ ամեն կիրակի ներդաշնակ կերպով երգում է եկեղեցում հանգուցեալ Եկմալեանի կազմած պատարագը: Բացի սրանից շատ անգամ եկեղեցու զանազան կարիքների ժամանակ նիւթական օգնութիւն է հասցրել: Նոյնպէս նրա միջոցով պարկէտով ծածկվել է տեղիս ուսումնարանի դահլիճի յատակը:

Միտական

ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ ԿՐԱՍՆԱՒՈԴՍԿՈՒՄ

Մարտի 15-ին

Վերջին ժամանակներս Կրասնօվօդսկում սկսվել են մի շարք գործադուլներ: Գործադուլ էին արել տեղիս խանութների գործակատարները, որոնք դրել էին մի շարք տնտեսական պահանջներ և 3 ժամ կէսօրեայ հանգստութիւն: Ահա այդ պահանջների համար է, որ գործակատարները ամբողջ երկու տարի է շարունակ կռւում են իրանց բռնակալ խօզեյինների դէմ: Մինչև այժմ գործակատարները ոչ թէ միայն խանութումն էին քնում, այլ և տանը, ենթարկվելով խանումի սուր կապրիզներին ու հրամաններին: Վերջապէս այսօր փառաւոր կերպով բաւարարութիւն ստացան իրանց պահանջները: Խօզեյիններն էլ չեն խօսակցվում: Գիտակից գործակատարների վրա նայում են ճիշտ այնպէս, ինչպէս թուրքը խոզի մսի վրա:

Տեղիս մի վաճառական, որը սկզբից ինքն էր կազմակերպել գործակատարներին (պէտք է յիշել, որ այն ժամանակ գործակատար էր, իսկ այժմ քաղաքի հարուստներից մէկն է) այսօր երբ իր կաշին են դիպչում, բղաւում է. «տեսէք, թէ ձեզ կազմակերպողը ես եմ եղել, ձեր գործադուլների մասին ոչինչ չեմ ասել, այլ ասել եմ եղէք խոնարհ, հաւատարիմ և ազատ ժամերին ընթերցանութեամբ պարապեցէք». հրաշալի նպատակ. ողորմելին չէ էլ մտածում, թէ արդեօք ո՞րտեղից գործակատարը ճարէ այդ ազատ ժամերը, որ կարողանայ ընթերցանութեամբ պարապել: Առաւօտեան խանութները բանում են 7-ին և փակում երեկոյեան 10-ին: Կէսօրերին ժամի 12 ից մինչ 3—4-ը, ինչպէս յայտնի է: Անդրկասպեան երկրում այնպիսի շոգեր են լինում, որ փողոցներում ոչ մի մարդ չէ լինում, նոյն իսկ այդ ժամերին էլ մեր ագահ խօզեյինները չէին ուզում խանութները փակել, չը նայած որ առևտուր էլ չէր լինում: Այդ բոլորը գործակատարները տարել են համբերութեամբ, բայց այժմս արդէն համբերութեան բաժակը լցվել է, այժմս գործակատարները եկել են ինքնագիտակցութեան. խմբում են իրանց չարն ու բարին և դուրս կը շպրտեն ասպարէզից բուրժուա տարրերին, որոնք մնում են գործակատարական միութեան մէջ մտքեր պղտորելու համար:

Ամսիս 9-ին, երբ շոգենաւը պէտք էր ճանապարհվէր այստեղից Բագու, նաւաստիները անսպասելի կերպով ապստամբվում են և դնում իրանց պահանջները: Գործադուլին միանում են ստորին ծառայողներից սկսած մինչև նաւապետը: Հինգ օր է պօստ չէ ստացվել. այսօր եկել է զինուորական փլօտը: Գործադուլ անող նաւաստիները պաշտօնազրկված են արված և եթէ մինչև ամսիս 20-ը դրանց պահանջներին բաւարարութիւն չը տան և չընդունեն իրանց պաշտօններում, այն ժամանակ սպասվում է ընդհանուր գործադուլ, որին և կը մասնակցէ երկաթուղու բանւորութիւնը:

Պ. Ներսէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մարտի, 12-ին

Յարգելի «Մշակ» լրագրի մէջ ներկայ տարվայ փետրվարի 21-ին, №39-ում տպագրված էր մի յօդուած «Գիւղական կարիքները» վերնագրով, որտեղ ի միջի այլոց հաղորդված էր, իբր թէ Զանգեզուրի գաւառական մասնաժողովը, որ կազմված է Գանձակի նահանգապետի կարգադրութեամբ, ներքին գործերի մինիստրութեան կողմից նշանակված 52,538 րուբլի 30 կօպ. նպաստը իմ իրաւասութեան յանձնված գաւառի կարօտեալ ազգաբնակութեանը բաժանելու համար, անաչառ չէ վերաբերվում:

Իմ նախագահութեամբ գործող մասնաժողովի ընդհանուր որոշման համաձայն, ճշմարտութիւնը վերականգնելու համար, պարտ եմ համարում հաղորդել հետևեալը. ա) Նշանակված նպաստը բաժանելիս՝ մասնաժողովին մասնակցում էր ոչ միայն ես, հարկային տեսուչը երեք հաշտարար միջնորդներ, զինուորական իշխանութեան ներկայացուցիչը, այլ և տեղական ազգաբնակութեան կարիքները մօտիկից իմացող ներկայացուցիչներ, հայերից և թուրքերից, այնպէս որ մասնաժողովի կողմից ոչ մի աչառու վերաբերմունք չէր կարող թոյլատրվել յօգուտ այս կամ այն կողմի. բ) Մինքէնդ գիւղի բնակիչներին նպաստ տալու հարցը քննելիս՝ ուշադրութեան առնվեց հետևեալ հանգամանքը. Նահանգապետի տուած յունվարի 18-ի № 1022 հրամանի հիման վրա, այն է՝ «օգնութիւն տալ ամենից աւելի սուր կարօտութիւն ունեցող և մասնաւոր օգնութիւնից զրկվածներին», մասնաժողովը մինքէնդցիների վերաբերմամբ ուշադրութեան առաւ առաջուց նրանց տրված օգնութիւնը. 1) 1905 թւին անդառնալի կերպով նրանց, թւով 355 հոգուն, տրված էր 1673 րուբլի. 2) 1906 թւին դաշտերը սերմանելու համար տրված էր օժանդակութիւն՝ 2353 րուբլի 4 կօպէկ, 3) վայելելով տեղական ադմինիստրացիայի յատուկ և մշտական խնամատարութիւնը, որ միջոցներ էր ձեռք առնում ապահովելու նրանց ցանքերն ու հօտերը 1905 թւին աշնանը և 1906 թւի գարնանը, նրանք ապահոված էին մատակարարութեան կողմից, 4) 1906 թւին նրանք ստացան Բագուի բարեգործներից Ներսէս վարդապետի միջոցով 3000 րուբլի. 5) մշտապէս ապրելով Գօրիսի մէջ, նրանց համար յատկացված ձրի բնակարաններում նրանք հնարաւորութիւն են ունեցել մշտական վաստակ ունենալու, 6) գաւառական մասնաժողովի անդամների ասելով մինքէնդցիները խիստ կարիք չունեն կառավարութեան անմիջական օգնութեան. 7) ինչպէս յայտնեց մասնաժողովի կողմից հրաւիրված Բագուի հայոց Կուլտուրական Ընկերութեան տեղական կօմիտէտի նախագահ Գէորգբեկեանցը, յիշեալ ընկերութիւնը, ի նկատի

առնելով մինքենդցիների ներկայ տնտեսական վիճակը, հարկաւոր չէ համարել այլևս իր կողմից օգնութիւն տալ:

Ապա նպաստներ բաժանող մասնաժողովը, հիմնվելով ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ նշանակված յատուկ մասնաժողովի կատարած քննութեան վրա, որը գտել էր, որ ջարդերից վնասված Մինքենդ գիւղին պէտք է տալ 3900 րուբլի օժանդակութիւն միայն մատակարարութեան համար, չը նայելով իմ արած առաջարկութեանը, տալ նրանց օգնութիւն մեր տրամադրութեան տակ գտնված օժանդակութեան գումարից, այնուամենայնիւ գտաւ, որ նրանց ներկայ տնտեսական դրութեան վերոյիշեալ պայմանները ի նկատի առնելով, նոյնպէս և կառավարութիւնից խնդրած գումարի զեղչումը 198 հազարից 52 հազար, մինքենդցիները կարող են պահպանել իրանց գոյութիւնը ձմեռվայ ծանր ժամանակներում և առանց յիշեալ գումարից օգնութիւն ստանալու, քանի որ կան այնպիսի գիւղեր, որոնք աւելի խիստ կարօտութիւն են զգում օրվայ կտոր հացի:

Այնուամենայնիւ մասնաժողովը անհրաժեշտ համարեց յատկացված օժանդակութեան գումարի մնացորդներից նպաստ տալ կարօտեալ այրի կանանց և որբերին:

Ինչ վերաբերում է թղթակցութեան մէջ յիշված «Ասեն» և «Գօշազ» գիւղերին, ես, որպէս գաւառապետ, պարտք եմ համարում յայտնել, որ «Ասեն» գիւղ չը կայ ինձ յանձնված գաւառում, իսկ «Գօշազ» գիւղը, որ բաղկացած է 432 հոգուց, մասնաժողովի կարգադրութեամբ ստացել է 432 րուբլի այդ գիւղի ամենից աւելի կարօտութիւն ունեցողների համար:

Վերջացնելով նամակս, աւելորդ չեմ համարում հաղորդել, որ մասնաժողովի օրագրերը, ի մէջի այլոց և մինքենդցիներին օգնութիւն տալու մերժումի արձանագրութիւնը ներկայացված են նահանգի կառավարիչ Բարանովսկուն, որի ներկայութեամբ էր տվել յիշեալ օժանդակութիւնը և որի գործունէութիւնը ընդհանուր առմամբ հաւանութիւն է ստացել Նորին գերազանցութեան կողմից: Խնդրում եմ միւս լրագրներին, որոնք արտատպել են յիշեալ յօդուածը, արտատպել և իմ այս գրութիւնը:

Մասնաժողովի նախագահ՝ Զանգեզուրի գաւառապետ Կապիտան Միտկեւիչ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք Ա. Ջանեանի «Բանաստեղծութիւններ» II պրակ. 30 երես, գինն է 10 կոպէկ:

—

Անցեալ 1906 թւի ընթացքում և մինչև այժմ ներքին գործերի մինիստրութիւնը Կովկասի Փոխարքայի միջնորդութիւնների համաձայն մատակարարական և սերմացուի պէտքերի համար յատկացրել է հետևեալ գումարները Թիֆլիսի նահանգին—34575 ր. Բագուի նահանգին—11,100 ր. Երևանի—174000 ր. և Գանձակի—396038 րուբլի: Բացի դրանից, ֆինանսների մինիստրը 3600 րուբլի յատկացրել է հայ-թուրքական ընդհարումներից վնասված Գանձակի նահանգի Արէշի գաւառի Մարզուգի գիւղի բնակիչներին՝ քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար: Այդպիսով պետական գանձարանի միջոցներից Անդր-կովկասի ազգաբնակութեան բաց է թողած 519'312 րուբլի:

—

Փոխարքայի տնօրէնութեան ներքոյ ուղարկված է Պետերբուրգից մատակարարական դրամագլուխից իբրև լրացուցիչ 237,320 րուբլի Գանձակի նահանգում արտերը սերմանելու և մատակարարական մթերքներ գնելու համար:

—

Ներքին գործերի մինիստրութիւնը տեղեկացրել է Կովկասի Փոխարքային, որ Երևանի նահանգի չորս գաւառների 105 գիւղերի—որոնք վնասվել են հայ-թուրքական ընդհարումներից, յարուցած միջնորդութեան նկատմամբ՝ տալու 804518 րուբլի փոխատուութիւն քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար, բանակցութիւն է վարվել ֆինանսների մինիստրի հետ, որը յայտնել է, որ ներկայիս պետական գանձարանի վերին աստիճանի սուղ միջոցների պատճառով, նա միանգամայն հնարաւորութիւն չունի որևէ գումար յատկացնել՝ այդ միջնորդութիւնը յարգելու համար:

—

Կովկասի կարգադրութեամբ արդէն փոխադրված է 715 րուբլի Թիֆլիսի նահանգի Գորու գաւառի Կնուգօ և Լաուչարի գիւղերի մատակարարական փոխատուութիւն տալու համար:

—

Թիֆլիսում առհասարակ ապրիլեան փոթորիկներ յաճախ են պատահում. մարտի 20-ի փոթորիկը, որ տևեց ընդամենը 1—2 րոպէ, պէտք է դասել մթնոլորտային հազուագիւտ երևոյթների շարքում: Բարոմետրը դեռ գիշերից զգալի չափով իջաւ, առաւօտեան բարեխառնութիւնը մի քանի անգամ փոփոխվեց զգալի չափերով: Մօտաւորապէս առաւօտեան ժամը 9½-ի մօտերը քաղաքի զանազան տեղերում նկատվեց գնդաձև կամ մոլար կայծակ. 1-ին արական գիմնազիայի շինութեան մօտ մի քանի մեծ գունդեր երկար ժամանակ պտոյտ եկան գետնի վրա և ապա բարձրացան վերև, դէպի ամպերը: Այդ երևոյթի ժամանակ չը լսվեց որոտ: Միևնոյն ժամանակ ճայթեց ուժեղ կայծակ, որից պատուհանների ապակիները դողացին. երերվեցին և տները: Մի քանի դպրոցներում վախեցած երեխաները դուրս են վազել դասարաններից: Լօրիս-Մելիքեան փողոցում մի զինուոր ընկել է գնդակների ցանցի մէջ և շշմված կայծակի որոտմունքից, վայր է ընկել անզգայ: Երկար ջանքերից յետոյ աջողվում է նրան ուշքի բերել: Բօտանիքական այգում նոր կառուցվող շինութեան վրա իջել են մի քանի ահագին գունդեր, որոնք շինութեան աշտարակի գլխին պտոյտ են եկել մի րոպէի չափ: Աշտարակի մէջ բացվում է 2 արշին ճեղքվածք: Կենտրոնական հեռախօսական կայարանը, չը կանխատեսելով փոթորիկը, չանջատեց, որի պատճառով էլ մի քանի տներում հեռախօսները կրակ են բացել շատ նման հրացանի կրակին. Նրանցից կայծեր ենթան: Քաղաքում լուրեր տարածվեցին, թէ կայծակի զոհ են գնացել մի քանի մարդ, սակայն այդ լուրերը բարեբախտաբար չը ճշտվեցին: Կայծակի խփելուց յետոյ տեղաց կարկուտ, որ յետոյ փոխվեց ձիւնի խոշոր փաթիլների: Ջերմութեան աստիճանը զգալի իջաւ: Ժամը 12-ի մօտերը երկինքը պարզվեց: («Т. Л.»)

—

Միքայէլեան հիւանդանոցը, որ պահվում է գեմստվային միջոցներով, հնացել է և արդէն չէ համապատասխանում հիւանդանոցի բարեկարգութեան պահանջներին: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, հարց է յարուցվում—քաղաքի ծայրում ձեռք բերել խոշոր հողաբաժին և կառուցել նոր հիւանդանոց, ժամանակակից բժշկութեան բոլոր պահանջներին համապատասխան: Կարծիք կայ, որ քաղաքը դրա համար ձրիաբար մի հողաբաժին կը յատկացնէ:

—

Թիֆլիսի ելեքտրաքարշի վարչութիւնը քաղաքային վարչութեան ներկայացրել է Նախալօվկայի գծի մակարդակը: Նախագիծը կազմված է այն հաշւով, որ երկաթուղային վարչութիւնը կը թոյլատրէ գիծը անցնել երկաթուղային կամուրջի տակով:

—

Թիֆլիսից Բագու է մեկնում Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Վ. Միցկեվիչը:

—

Թիֆլիսի ռէալական դպրոցի փակված 6-րդ և 7-րդ դասարանների աշակերտները դիմել են ուրիշ քաղաքների ռէալական դպրոցներին և խնդրել են ընդունել իրանց համապատասխան դասարանները կամ թոյլատրել քննութիւն տալ իբրև կողմնակի անձինք: Մի քանիսները պատասխան են ստացել, որ արգելք չը կայ, որ նրանք քննութիւն տան կողմնակի անձանց հետ միասին, բայց միայն խիստ, մինիստրական ծրագրով: Որովհետև այս տարի պարապմունքները ընթացան շատ թոյլ, իսկ մինչև քննութիւնները շատ կարճ ժամանակ է մնացել, ուստի յոյս կայ, որ աշակերտները աջողութեամբ քննութիւն տան: Մնում է կորցնել մէկ տարի:

—

Քաղաքային ինքնավարութեան ծառայողները քաղաքային վարչութեան ներկայացրին մի շարք պահանջներ:

—

Ստացանք Վաս. Նեմիրովիչ-Դանչենկոյի «Հայունի Գայիանէն», թարգմ. Արսէն սարկ. Սիմէօնեանց, գինն է 8 կոպէկ:

—

Ստացանք Թադէոս Փինաջեանից իր հանգուցեալ կնոջ Հռիփսիմէ Փինաջեանի յիշատակին, սովեալների օգտին, 10 րուբլի:

—

Ապրիլի 7-ին, Արտիստիկական ընկերութեան դահլիճներում տեղի կունենայ ուսանողական երեկոյթ:

—

Այսօր, երեկոյեան ժամի 7 ին, քաղաքային խորհրդի դահլիճում կը կայանայ Թիֆլիսի գրասենեակներում, առևտրական և արհեստական հիմնարկութիւններում ծառայողների ժողովը, ընտրելու 6 ներկայացուցիչներ խառն մասնաժողովի համար, որը պէտք է մշակէ պարտադիր որոշումներ, որոնք կապահովեն յիշեալ հիմնարկութիւններում ծառայողների նորմալ հանգստութիւնը:

—

Դատաստանական պալատի գլխաւոր նախագահի կարգադրութեամբ բոլոր քաղաքական գործերը յանձնված են պալատի 2-րդ քրէական ատեանին և Թիֆլիսում քննվելու են պալատի գլխաւոր նախագահ պ. Կօչուբէյի նախագահութեամբ և նստաշրջաններում, պալատի նախագահ պ. Բօգօրսկու նախագահութեամբ:

—

Մահմեդականների «Իմամ-Կրխի» տօնի առթիւ, մարտի 22-ին բաղանիքները փակ կը լինեն:

—

Մօտ օրերս կայացել է «Թիֆլիսի մահմեդականների բարեգործական ընկերութեան» անդամների ժողովը: Ժողովին պարզվել է, որ ընկերութեան դրամական հաշիւների մէջ մեծ խառնաշփոթութիւն է տիրում: Որոշվել է ընկերութեան բոլոր գաւառական գործակալներից լիակատար դրամական հաշիւ պահանջել:

—

Վրաց «Մինաթլէ» լրագիրը, միջոցների բացակայութեան պատճառով, դադարեցրել է իր հրատարակութիւնը:

—

Թամամշեվի ջրաղացի պահապան Տեղօ Մախաթաձէն յայտնել է ոստիկանութեան, որ մարտի 19-ին, երեկոյեան ժամը 8-ի մօտերը Մնացականեան կամուրջի վրա անցնելիս են եղել 4 հոգի և ինչ որ բանի մասին վիճելիս են եղել: Կամուրջի մէջ տեղում վիճողներից 3-ը բռնել են չորրորդին և նետել են Քուռ գետը իսկ իրանք փախել են: Նետվածը խեղդվել է:

—

Աւազակութեան և առհասարակ յանցանքների առաջն առնելու համար Գանձակի գեներալ-նահանգապետ Բաուէրը հրատարակել է հետևեալ հրամանը: «Շինական հասարակութիւնները, ամեն տեսակ բնակատեղիները և հասարակութիւնների սահմաններում ամեն տեսակ սեփականութիւն ունեցող տէրերը պատասխանատու են նրանց մէջ օրինական կարգ ու կանօնը և ապահովութիւնը պաշտպանելու, որի համար այդ տեսակ հասարակութիւնները և տէրերը կամ թէ պատասխանատու կառավարիչները, որոնք մեղաւոր են աւազակներին թաքցնելու մէջ, ինչպէս և նրանք, որոնց սահմաններում կամ որոնց բնակիչները յանցանքներ են գործում և մեղաւորները չեն գտնվում, անշարժ կայքերի կեցողները կամ տէրերը ենթարկվում են իմ հրատարակած պարտադիր կանոնների 30-րդ յօդուածի պատասխանատուութեան»:

—

Գօրու գաւառապետ Գուգուշվիլու թաղմանը, ինչպէս հաղորդում է «Г. К.» լրագիրը, եղել է նրա մարդասպաններից մէկը, որին և ձերբակալում են:

—

Վրացերէն լեզւով հրատարակվող «Դրօ» թերթը հաղորդում է, որ մօտիկ ապագայում Թիֆլիսի արհեստակցական միութիւնների վարչութիւնը մտադիր է գումարել արհեստակցական միութիւնների կօնֆերէնցիա: Այս նպատակով միութիւնների վարչութիւնը նախօրօք ուղարկել է բոլոր միութիւններին խորհրդակցութեան նիւթ դարձնել հետևեալ խնդիրները, որոնք քննութեան են ենթարկվելու կօնֆերէնցիայում. 1) տեղեկագիր վարչութեան գործունէութեան վերաբերմամբ. 2) միութիւնները պէտք է լինեն կուսակցական թէ՞ անկուսակցական. 3) միութիւնների լեգալիզացիա. 4) ինչ կոչւում է ունենալու կենտրոնը. 5) միութիւնների լօզունգը. 6) միութիւնների կենտրոնի կամ այլ մարմինների համար արդեօք հնարաւոր է ոչ պրօֆեսիոնալ մարդու ընտրութիւնը. 7) կենտրոնի ընտրութիւնները պէտք է արհեստակցական լինեն, թէ՞ պրօպօրցիօնալ. 8) որոշել միութիւններից ստացված մուտքի տօկոսային քանակութիւնը յօգուտ կենտրոնի. 9) գրականութիւնը և 10) պրօպագանդիստների խումբ: Կօնֆերենցիային մասնակցող պատգամաւորները պիտի ընտրված լինեն հետևեալ կարգով. ամեն մի արհեստակցական միութիւն, որն ունի 300 անդամ, ընտրելու է երկու պատգամաւոր, 500-ը—երեք, 1000-ը—չորս, իսկ այնուհետև իւրաքանչիւր հազարին մի-մի պատգամաւոր:

—

Ընկերութիւնների և դաշնակցութիւնների նահանգական վարչութիւնը մերժել է օրինականացնել հրէական «Թէոդոր Հերցլ» անունով ընկերութիւնը, ընկերութեան կանօնադրութեան պատճառով:

—

Գանձակի նահանգապետին բաց է թողնված կրկին 73,000 րուբլի, արդէն տրված 7200 րուբլուց անկախ, ձորերը ոչնչացնելու համար:

—

Շամախու բնակիչ Բէժալ Եֆէնդի Ունսիզադէն դիմել է նահանգապետին և խնդրել է թոյլատրել նրան հրատարակել իր խմբագրութեամբ ադրբեջանական լեզւով օրաթերթ «Մէզգէր» (Երևոյթ) անունով, որ նուիրված է լինելու հասարակական և քաղաքական կեանքին:

—

Մօտ ապագայում կայանալիք Ռ. Ս. Դ. Կ. համառուսական համագումարի համար ընտրված են 10 պատգամաւորներ Թիֆլիսի բաշկոնից, որոնց թւումն են Պլեխանովը և Նժօրդանիան: Թիֆլիսի բաշոնից ընտրված բոլոր պատգամաւորները պատկանում են փոքրամասնականների ֆրակցիային:

—

Կայսրութեան մատակարարական գործի ժամանակաւոր կառավարիչ Գերբէլը տեղեկացրել է Կովկասի Փոխարքային, որ ներքին գործերի մինիստրութեան կից կազմված յատուկ մատակարարական մասնաժողովը որոշել է նորին պայծառափայլութեան տրամադրութեան տակ դնել 237'320 րուբլի՝ իբրև փոխատուութիւն Գանձակի նահանգի 6 գաւառների բնակիչներին մատակարարական պէտքերի և սերմացուի համար, տարվայ ընթացքում վերադարձնելու պայմանով: Այդ փողերը արդէն ուղարկված են Փոխարքայի դիւանատան հասցէով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Զինուորա-բժշկական ակադեմիայի առաջին լսարանում պարապմունքները դադարեցին անորոշ ժամանակով, մինչև որ կը հետազօտվեն Տերէշինի դասախօսութեան ժամանակ ուսանողների մէջ ծագած ծեծի հանգամանքները:

ՄՕՍԿՎԱ, 19 մարտի: Համալսարանի ռէկտորը և սրա օգնականը ընդունվեցին քաղաքապետից, որը յայտնել է, որ իրան անկարող համարելով միջամտել համալսարանի ներքին գործերին, չէ կարող թոյլատրել կամ արգելել ժողովներ գումարել, եթէ որ այդ ժողովները կը գումարվեն ակադեմիական հողի վրա. բայց մէկ անգամ որ նրանք յեղափոխական բնաւորութիւն են ստանում, նա կը դադարեցնէ նրանց և թոյլ չի տալ կողմնակի անձանց: Ռէկտորը համակրանք է յայտնել քաղաքապետի հայեացքներին և ասել է, որ ինքը կը յայտնէ սրանից յետոյ ժողովների ծրագրի մասին:

ԼՈՆԴՈՆ, 20 մարտի: Հնդկաստանից հաղորդում են յուզիչ լուրեր ժանտախտի սաստկանալու մասին: Մարտի առաջին շաբաթում եղել է 38,566 հիւանդանալու դէպք, որոնցից 32,709-ը վերջացել են մահով: Մարտի երկրորդ շաբաթում—49,741 դէպք, որոնցից 41,667-ը վերջացել են դարձեալ մահով:

ՄԱՐԻՈՒՊՕԼ, 20 մարտի: Նաւագնացութիւնը բացվեց:

ՄՕՍԿՎԱ, 20 մարտի: Ոստիկանութիւնը գտել է երկաթուղային դաշնակցութեան գաղտնի տպարանը: Մի քանի մարդ ձերբակալված են:

ՎԻԷՆՆԱ, 20 մարտի: 2800 դերձակներ և 3500 դերձակների օգնականներ վճռեցին գործադուլ անել մարտի 20-ից:

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ, 20 մարտի: Տեսէնսկի գիւղում ընտանեկան վէճի ժամանակ գիւղացի Ջերնովը ինքնամոռացութեան մէջ սպանեց հօրը, ապա վերադարձաւ տուն և կողմնակի մարդկանց ներկայութեամբ կացինով զարկեց մօրը:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 20 մարտի: Դնեպրը բացվեց:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներքայինի:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տելէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(տ. օ.) 125—150

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ
ՊՕԷՄԱՆԵՐ
Գիրք երկրորդ
Գինն է 40 կոպ.
Դիմել՝ հայ գրավաճառներին կամ Ալեքսանդրապոլ՝ հեղինակին: 4—8

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
գիրքը. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ:
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.: 2) Քաջ Աղասի 25 կ.: 3) Ժամանակը ոսկի 40 կ.: 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.: 5) Սասունցի Յոհան 30 կ.: 6) Երկասիրութիւններ 50 կ.: 7) Գալօ ափօ, Խաչան 12 կ.: 8) Աստուած չը ճանաչող 10 կ.: Շէն թագաւորի աղջիկը 25 կ.: 11) Երկու աղբերացեղ 30 կ.: 12) Հէքեաթներ 30 կ.: 13) Անմեռ աշխարհ 8 կ.: 14) Աստուած աչքատի կերպում 20 կոպէկ:
Մեծ գումարով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց:
(ե. հ. կ.) 2—20

,,Գուտտենբերգ"
Գրախանութում վաճառվում են
Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց 20 կ.:
Տեղրակ առեղնագործութեան, Օսկեանի 2 ր. 50 կոպ.:
Ուսեալ պանդուխտ, Ամիրջանեանի 15 կ.:
Գիւղական բակ (մի մեծադիր պատկեր զանազան գոյներով նկարված) 1 ր. 25 կ.:
Ազգային երգարան գրպանի, տպ. Լօնդօն 50 կ.:
Մեծակ, երգիծաբանական թերթ № 1, 15 կ.:
Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, պրօֆեսոր Թումանեանի 2 ր.:
Ռուսերէն հատընտիր հատուածներ հայերի համար (դասաւանդութեան բացատրութիւններով) կազմեց Ս. Մանդինեան, 55 կոպ.:
Գեղագրութեան օրինակներ, մասն գ. Գ. Լեւոնեանի, գունաւոր, 35 կ.:
Քարտէզ Հայաստանի, Վենետիկի տիպ, կտաւի վրա շինված 3 ր.:
Ընդհանուր աշխարհագրութիւն, մ. ա. Յովհաննիսեանի, 50 կ.:
Գրպանի ուղղագրութիւն, Գ. Վանցեանի, 5 կ.:
Պատմական քերականութիւն, Գ. Վանցեանի, 75 կ.:
Ի՞նչ են սովորեցնում սօցիալ-դեմօկրատները, Մենին, 5 կ.:
Ո՞րն է իսկական ներկայացուցչութիւնը, կազմեց Յ. Ս. 2 կ.:
Ընտրութեան օրը Գերմանիայում, թարգմ. Ա. Պայազատ, 5 կ.:
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу. 1—2

Вышелъ № II Вѣстника
Народной Свободы
(ЕЖЕНЕДѢЛЬНИКЪ К.-Д. ПАРТІИ)
СОДЕРЖАНІЕ: 1. Парламентская недѣля. В. Д. Набокова. 2. Необходимый запросъ. А. И. Каминка. 3, Московское совѣщаніе о мѣстномъ самоуправленіи при ц. к. 4. Объяснительная записка къ проекту положенія о выборахъ въ государственную думу. 5. Отчетъ секціи о продолжительности рабочаго времени. 6. Парламентская фракція. 7. Центральный комитетъ. 8. Проектъ положенія о выборахъ въ государственную думу. 9. Расписаніе губерскихъ и уѣзныхъ гласныхъ. 10. Обращенія къ депутатамъ 11. Московская группа. 12. Провинціальный отдѣлъ. 13. Изъ жизни другихъ партій. 14. Объявленія.
Приложеніе: списокъ членовъ думской фракціи партіи народной свободы.
Продолжается подписка на 1907 г.
(II-й годъ изданія).
Подписная цѣна съ доставкой и пересылкой на годъ—3 руб.; на 6 мѣсяцевъ 1 руб. 80 коп.; за границу—вдвое.
Отдѣльные №№ по 10 коп.
Адресъ редакціи и конторы: СПБ., Кирочная, 30. Отдѣленіе конторы: въ Москвѣ при книгоиздательствѣ «Народное Право», Б. Чернышевскій 9, кв. 26. 1—1

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(Նիրօշնայա)
Ժողովրդական համալսարան
Կիրակի, մարտի 25-ին
I
Հայերէն լեզւով Լ. ՔԱՔԱՅԵԱՆ
կը կարդայ դասախօսութիւն
,,Ժողովրդական համալսարանները Արևմտեան Եւրոպայում"
Սկիզբը 11 ժամին առաւօտեան
II
Ի. ԿԻՔԿԻՆ
Ռուսերէն լեզւով կը կարդայ դասախօսութիւն Երկիրը, Արեգակը, Մոլորակները, Աստղերը և Գիսաւորները»:
Սկիզբը ժամի 1-ին
Տոմսակները ծախվում են մուտքի մօտ:
(հ. շ.) 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ա. Ջանեանի
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
II ՊՐԱԿ
Դիմել՝ գրավաճառներին 1—5

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)
Թիֆլիսից դէպի Բաթում
Պօստատար 1 ժամ 24 ր. ցերեկվայ
Մարդատար 8 » 5 » առաւօտեան
» 11 » 8 » գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու
Մարդատար 9 ժամ 13 ր. առաւօտ.
Պօստատար 7 » 48 » երեկոյեան
Մարդ-ապրանք. 11 » 38 » »
Թիֆլիսից դէպի Երևան
Պօստատար 12 ժամ 40 ր. գիշերվայ

Խնդրում եմ յարգելի հասարակութեան յանձն առնել ձրիապէս պատրաստել, կամ պատրաստել տալ իմ 10 տարեկան որդուս Ներսիսեան դպրոցի համար ինքս մնալով անզօր հնարաւորութիւն չունեմ վճարել: Ուրախ եմ նաև որևէ պաշտօն խանութներում կամ որևէ հիմնարկութիւններում: Դիմել «Մշակի» խմբագրութեան: 5—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
91—100

ՆՈՐ ԳԻՒՏ
,,ԲՕՐՕ ՆԱՖԹԱԼԱՆ"
Բոլորովին փչացնում է գլխի թեփը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք:
Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ:
Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами. Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ: (22, 7) 3—25

Սրանով յայտարարվում է
ի գիտութիւն ընդհանրութեան, որ
ԴԻՄԻՏՐԻ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ
ՍԵՍԻԵՎԻ
ՕՂԻ ԵՒ ՍՊԻՐՏԻ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՊԱՀԵՍՏԱՐԱՆԸ
ԲԱՑՎԱԾ Է
Վօզգալնի փողոցի վրա № 6.
Հեռախօս № 197

ЗАВОДСК. МАРКА
(16, 18, 22) 3—3

Բացված է բաժանորդագրութիւն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելի յաւելուած» անուան տակ:
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»: 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն: 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին): 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.: 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը:
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր:
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.: Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.: Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի:
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԷԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրէմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն և 3) Խաղաղութիւն
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները: Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրէմիան № 4—ԳԵՐԻՆԵՐ և գատկական պրէմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.:
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրէմիաները առանձին արժեն հատը 50 կոպէկ: Մեծադիր գունաւոր նկար պրէմիան 3 րուբլի:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»: Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը:
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէզէյեան
(եր. հինգշ. և շաբ.) 43—7

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկ. Վարչութիւնը
Խնդրում է Ընկերութեան մեծապատիւ անդամներին շնորհ բերել կիրակի մարտի 25-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ընկերութեան ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու կար ու ձևի արհեստանոցում, Գանօվսկայա № 19:
Ընդհանուր ժողովի զբաղման նիւթը հետևեալն է.
1) 1906 թ. ապրիլի 6 ին և 15-ին կայացած ընդհանուր ժողովների արձանագրութեանց ընթերցումը:
2) Վարչութեան 1906 թւի գործունէութիւնը:
3) Ընկերութեան 1906 թ. ելևմտից հաշիւը:
4) Վերստուգիչ յանձնաժողովի և արհեստանոցի կառավարչուհու զեկուցումները:
5) 1907 թ. նախահաշւի ընթերցումը:
6) Վարչութիւնից հերթով դուրս եկող 3 անդամի, վերստուգիչ յանձնաժողովի և փոխանդամների ընտրութիւնը:
7) Կանօնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու խնդիրը:
8) Ընկերութեան 25-ամեայ յօբելեանի հարցը:
9) Ընկերութեան գործունէութիւնը արհեստի նոր ճիւղերով ընդարձակելու խնդիրը:
(18, 22, 25) 2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ. ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ,,ԶԱՐԿ" 1908 Թ. ՄԱՅԻՍԻ 1-Ը
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,
որ լոյս է տեսնելու մայիսի 1-ից, դարձեալ Գրիգոր Բալասանեանի խմբագրութեամբ, աւելի մշակված և բնդարձակ ծրագրով: Թերթը բաղկացած կը լինի փոխանակ 16՝ 20 մեծադիր էջերից, կազմը գեղեցիկ գունազարդ շարկով, թուղթը և տպագրութիւնը մաքուր: Տարեկան 8 րուբ. կէս տարվանը՝ 5 ր., արտասահման՝ 10 ր., կէս տարվանը՝ 6 ր.: Հին և նոր բաժանորդներին արդէն լոյս տեսած «Զարկի» բոլոր համարները և 5 ընթերցանութեան պրէմիա-գրքերը ՁՐԻ: Հին բաժանորդները վճարելու են 5 ր. դուրս հաշւելով վճարած 3 ր.:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
«Զարկ»-ին աշխատակցելու են յայտնի գրողներ, հրապարակախօսներ և բանաստեղծներ:
«Զարկում» միայն կընդունվեն բազմակողմանի լուրջ և հետաքրքիր նիւթեր, հեռու միանգամայն հայհոյանքներից ու փողոցային դարձուածքներից:
Հասցէն՝ Тифлисъ, редакція «Заркъ».
«Նոր հրատարակչական ընկերութիւն» 3—3